2024, ՀՈՒԼԻՍ Բ, ԹԻՎ 14 (658)

Էջմիածնի Կաթողիկոսություն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հուլիսի 22-ին **Վերապատրաստման դասընթացներին մասնակից եկեղեցականներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած եկեղեցականներին, որոնք մասնակցում են վերապատրաստման երեքշաբաթյա դասընթացներին:

Նորին Սրբությունը, իր հայրական սերն ու օրհնությունը փոխանցելով հոգևոր հայրերին, ընդգծեց, որ վերապատրաստման դասընթացները լավագույն հնարավորությունն են ընձեռում աղոթական մթնոլորտի մեջ առավել զորացնելու հոգևոր կյանքը, հարստանալու նոր գիտելիքներով ու միմյանց փորձառությամբ:

Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց եկեղեցականներին իրենց հոգևոր ծառայության անդաստանում առավել զորացնել համայնքային կյանքը՝ ամրապնդելով հավատքը, հույսը և սերը մեր ժողովրդի զավակների կյանքում, ինչպես նաև իրականացնել իրենց հոգեխնամ առաքելությունը՝ ի բարօրություն հավատավոր հայորդիների, ի պայծառություն մայր Եկեղեցու և ի շինություն հայրենիքի:

Հանդիպմանը Նորին Սրբությունը պատասխանեց նաև քահանաների հարցերին, որոնք առնչվում էին Եկեղեցու կանոնական, ծիսական և հովվական կյանքին:

Հուլիսի 23-ին **Ռումին Ուղղափառ եկեղեցու պատվիրակությանը**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումին Ուղղափառ եկեղեցու պատվիրակության անդամներ Կիպրիան Իոն Լոնիտային և Ջորջ Ալեքսանդրու Լեպադատուին՝ ուղեկցությամբ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև եպս. Հակոբյանի:

Տաթև սրբազանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացնելով հյուրերին, տեղեկացրեց, որ Ռումին Ուղղափառ Եկեղեցու պատվիրակության անդամները Հայաստան են ժամանել բռնի տեղահանված արցախահայերի համար սոցիալական ծրագրեր իրականացնելու նպատակով:

Ամենայն Հայոց Հայրապետը, ողջունելով հյուրերին, իր գնահատանքը բերեց Ռումին Ուղղափառ Եկեղեցուն և Ռումինիայի իշխանություններին՝ Հայաստանին ու արցախահայությանը ցուցաբերվող աջակցության համար:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձավ հայ ժողովրդի առջև ծառացած անվտանգային մարտահրավերներին, արցախահայերի սոցիալական, արդար իրավունքների պաշտպանության, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման և գերիների վերադարձման խնդիրներին: Այս առնչությամբ Հայոց Հովվապետը հյուրերին ներկայացրեց Մայր Աթոռի կողմից արցախահայերի սոցիալական, արդար իրավունքների պաշտպանության, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման և գերիների վերադարձման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

Նորին Սրբությունը խոսեց նաև երկու երկրների սերտ հարաբերությունների մասին՝ գոհունակությամբ անդրադարձ կատարելով երկու ժողովուրդների միջև առկա դարավոր ջերմ կապերին, ինչպես նաև ռումինահայ համայնքի ներգրավվածությանը Ռումինիայի կյանքի տարբեր ոլորտներում և երկրի զարգացման գործընթացին: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Ռումինիայի իշխանություններին և Ռումին Ուղղափառ Եկեղեցուն՝ ռումինահայ համայնքի և Ռումինիայի հայոց թեմի նկատմամբ դրսևորվող հոգատար վերաբերմունքի համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն իր եղբայրական սերն ու բարեմաղթանքները փոխանցեց Ռումին Ուղղափառ Եկեղեցու Դանիել Պատրիարքին:



Հուլիսի 24-ին **ՀԲԸՄ-ի ՀԵԸ-ի «Անդրանիկ» սկաուտական բանակում ծրագրի մասնակիցներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայ երիտասարդաց ընկերակցության (ՀԵԸ) «Անդրանիկ» սկաուտական բանակում ծրագրի մասնակիցներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ-ի հայաստանյան նախագահ, ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչության անդամ Վազգեն Յակուբյանի:

Հանդիպմանը տիար Յակուբյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ընդգծեց, որ ՀԲԸՄ-ի ՀԵԸ-ի «Անդրանիկ» սկաուտական բանակում ծրագրի մասնակիցներն ուխտավորաբար այցելել են Սուրբ Էջմիածին՝ Մայր Եկեղեցուն իրենց հավատարմության ուխտը նորոգելու և ազգային ու հոգևոր արժեքների նկատմամբ իրենց սերը զորացնելու: Տիար Յակուբյանը նաև տեղեկացրեց, որ ծրագրին մասնակցում են Սիրիայի, Իրանի, Իրաքի և Հայաստանի ՀԲԸՄ-ի ՀԵԸ-ի մասնաճյուղերի սկաուտները:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունը բերելով սկաուտներին, կարևորեց սփյուռքահայ հայորդիների համախմբումը հայրենիքում, ինչն իր անջնջելի հետքը կթողնի երիտասարդների կյանքում՝ առիթ ընձեռելով զորանալու իրենց ինքնությամբ, զգալու հայրենիքի շունչն ու ոգին և հաղորդակցվելու ազգային ու հոգևոր արժեքներին: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչությանը՝ ազգային կյանքում հայրենանվեր առաքելության իրագործման, Մայր Աթոռին ու Հայոց Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերին ցուցաբերվող շարունակական զորակցության, ինչպես նաև կրթադաստիարակչական, մշակութային տարբեր ծրագրերի իրականացման համար:

Հայոց Հայրապետը պատգամեց երիտասարդ սկաուտներին՝ ՀԲԸՄ-ի ոգուն հավատարիմ՝ լինել ազգային ինքնության կրողը, առաջնորդվել ազգային շահերով և իբրև հայ ժողովրդի ու եկեղեցու արժանի զավակներ՝ հանձնառությամբ շարունակել իրենց առաքելությունը հանուն հայոց կյանքի շենացման:

ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի երիտասարդ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի եկեղեցասեր երիտասարդաց միությունների ավագ խմբի անդամներին՝ ուղեկցությամբ Ֆիլադելֆիայի Սուրբ Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հակոբ քհն. Գևորգյանի:

Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ տեր Հակոբը ներկայացրեց Մայր Աթոռ ժամանած երիտասարդներին՝ տեղեկացնելով, որ երիտասարդները Հայաստան են այցելել կամավորական ծրագրերին մասնակցելու համար, ինչպես նաև հաղորդակից լինելու հայրենիքի պատմամշակութային և հոգևոր ժառանգությանը: ➥ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի երիտասարդ ուխտավորներին

↩ էջ 1

Վեհափառ Հայրապետն իր ուրախությունը հայտնեց երիտասարդ հայորդիների՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցի առիթով՝ գոհունակությամբ հաստատելով, որ սփյուռքահայ հայորդիների մասնակցությունը կամավորական տարբեր աշխատանքներին ամրապնդում է նաև նրանց կապը հայրենիքի հետ և նպաստում հայրենասիրական ոգու զորացմանը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը գնահատեց երիտասարդների ծառայանվիրումը՝ հորդորելով մշտապես իրենց կարողություններն ու հմտություններն ի սպաս դնել մարդասիրական ու բարեսիրական կամավորական ծրագրերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը երիտասարդներին պատգամեց անխաթար պահել իրենց ազգային ինքնությունն ու հավատարմությունը նախնյաց արժեքներին և գործուն կերպով ներգրավվել ազգային-եկեղեցական կյանքում:

Հուլիսի 26-ին

ՀՀ-ում Իրաքի Հանրապետության դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Իրաքի Հանրապետության դեսպանության գործերի նորանշանակ ժամանակավոր հավատարմատար դոկտոր Ալի Աբդուլկարեմ Ութավիին:

Հանդիպմանը ներկա էին նաև Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Օշական եպս. Գյուլգյուլյանը և թեմի կենտրոնական վարչության ատենապետ տիար Կարապետ Գալուստյանը:

Նորին Սրբությունն իր բարեմաղթանքները բերեց ժամանակավոր հավատարմատարին և մաղթեց արդյունավոր ծառայություն իր առաքելության մեջ՝ կարևորելով երկու պետությունների միջև հաստատված փոխգործակցությունը և ժողովուրդների միջև պատմականորեն ձևավորված բարեկամական հարաբերությունները:

Խոսելով Իրաքի հայ համայնքի մասին՝ Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Իրաքի իշխանություններին համայնքի և թեմի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

Զրույցի ընթացքում Հայոց Հովվապետն անդրադարձավ նաև հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին, ինչպես նաև արցախահայության արդար իրավունքների պաշտպանության, Արցախի պատանդառված ռազմաքաղաքական ղեկավարության ու ռազմագերիների ազատ արձակման և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ միջազգային հանրության միջնորդական և հետևողական ջանքերի շնորհիվ հնարավոր կլինի տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն հաստատել:

Իր հերթին դոկտոր Ալի Աբդուլկարեմ Ութավին Նորին Սրբությանը հավաստիացրեց, որ ամեն ջանք ի գործ կդնի՝ ամրապնդելու և զորացնելու երկու երկրների համագործակցությունը: Ժամանակավոր հավատարմատարն անդրադարձ կատարեց նաև Իրաքում իշխանությունների կողմից գործադրվող ջանքերին՝ ուղղված ազգային ու կրոնական փոքրամասնությունների համերաշխ գոյակցությանը և նրանց իրավունքների պաշտպանությանը:

Հուլիսի 29-ին

Քառասնօրյա պատրաստության շրջանն անցած նորաօծ քահանաներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց քահանայական կոչմանն արժանացած և Մայր Աթոռում քառասնօրյա պատրաստության շրջանն ավարտած նորաօծ յոթ քահանա հայրերին:

Մայր Աթոռի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հարություն վրդ. Կիրակոսյանը Նորին Սրբությանը հավաստիացրեց, որ եկեղեցականները, քառասնօրյա պատրաստության շրջանն անցնելով, պատրաստ են իրենց նվիրյալ ծառայությունը բերելու Հայ Եկեղեցու անդաստանում:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով նորաօծ քահանա հայրերին, հորդորեց լինել ազնիվ, քաջ և նվիրյալ հովիվներ, իրենց անմնացորդ սերն ու մշտական հայրական խնամքը ցուցաբերել հավատացյալների հանդեպ:

Հայոց Հովվապետը հույս հայտնեց, որ եկեղեցականներն իրենց անսակարկ ու անձնդիր ծառայությամբ կնպաստեն հայրենիքի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը, և պատգամեց նորաօծներին պատասխանատվության մեծ գիտակցումով իրականացնել հոգեփրկչական իրենց առաքելությունը, Ավետարանի և սուրբ հայրերի պատգամների համաձայն՝ հայորդիների մեջ հաստատել ու զորացնել սերը Եկեղեցու և հայրենիքի նկատմամբ:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով օրհնեց քահանաներին և նրանց ընծայեց ձեռաց խաչեր և Սուրբ Հաղորդության մասնատուփեր:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են նորաօծ եկեղեցականների նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Դավիթ աբեղա Օհանյանը նշանակվել է Մայր Աթոռի լուսարարապետությունում՝ որպես փոխլուսարարապետ, Հոգեշնորհ Տ. Շահան աբեղա Մելքոնյանը ծառայության է կոչվել Գեղարդավանքում, Արժանապատիվ Տ. Բարսեղ քահանա Մկրտչյանը և Կորյուն քահանա Պապիկյանը ծառայության են նշանակվել Տավուշի թեմում, Արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Սարդարյանը՝ Շիրակի թեմում, Արժանապատիվ Տ. Կարապետ քահանա Ստեփանյանը և Տ. Արսեն քահանա Փահլևանյանը՝ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմում:

Նորին Սրբության հայրապետական տնօրինությամբ Արժանապատիվ Տ. Արմեն քահանա Կիրակոսյանը, ազատվելով Վեհարանում ստանձնած պարտականություններից, ծառայության է նշանակվել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՅ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցի-պետություն հարաբերությունները 4-րդ դարում: Ներսես Մեծ և Պապ թագավոր

Երբեմն կարիք է զգացվում հետադարձ հայացք ուղղելու պատմության խորքերին՝ նախկինում ունեցած ձեռքբերումների կամ ձախողումների գիտակցական վերագնահատման համար, առանց ժամանակի պաշտոնական մտայնությունների, կանխակալ պատկերացումների ու մեկնաբանությունների, գտնելու պատմության և արդիականության զուգահեռականությունը, քանի որ պատմությունը ոչ միայն դեպքերի հետևողական շարադրանք է, այլև իմաստնացնող փորձառություն, որը պարտավոր ենք յուրացնել՝ դրանից դասեր քաղելով: Հայ ժողովրդի համար այդպիսի բախտորոշ դրվագ է 4-րդ դարի երկրորդ կեսը, մասնավորապես Ներսես Մեծի և Պապ թագավորի՝ իբրև հոգևոր և աշխարհիկ ղեկավարների առաջնորդության շրջանը, մի ընթացք, երբ եկեղեցի-պետություն հարաբերությունները դեռևս ձևավորման սաղմնային փուլում էին: Սակայն մինչև բուն ժամանակահատվածին անդրադարձ կատարելը կարևոր է նախընթաց պատմությանը դառնալ, ինչը կօգնի առավել խորը ընկալել առկա աշխարհաքաղաքական և հասարակական-կրոնական իրադրությունը:

Ամբողջ 4-րդ դարի ընթացքում Հայաստանը, գտնվելով աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, իր անկախ պետականության և ինքնուրույնության պահպանման համար փորձում էր ճկուն քաղաքականություն վարել նվաճողական ձգտումներ ունեցող երկու հզոր պետությունների՝ Հռոմեական կայսրության և Պարսկական տերության միջև՝ պահի թելադրանքով դաշնակցային հարաբերություններ հաստատելով թե՛ մեկի, թե՛ մյուսի հետ: Դրանով պայմանավորված՝ Հայաստանում ձևավորվել էին գաղափարական երեք հոսանքներ՝ հռոմեամետներ, պարսկամետներ և ինքնուրույն քաղաքականության իրականացման կողմնակիցներ, որոնցից յուրաքանչյուրը փորձում էր իր կողմնորոշումը թելադրել: Այս առումով շրջադարձային եղավ հատկապես 301 թ. Հայաստանում քրիստոնեության հռչակումը՝ որպես պետական կրոն: Բնականաբար այն թե՛ կրոնական, թե՛ մշակութային և թե՛ քաղաքական մեծ հակազդեցություն առաջ բերեց Սասանյան Պարսկաստանի տիրապետող ազդեցության դեմ՝ չնայած այն փաստին, որ նոր կրոնը առաջին շրջանում մեծ ժողովրդականություն չէր վայելում, և մեծ թվով պարսկամետ իշխաններ դեռևս մնում էին կրոնական նախկին համոզումներին:

Ի հակադրություն Պարսկաստանի՝ Կոստանդիանոս Մեծի կողմից քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը հայ-հռոմեական ամուր կապերի կարևոր պայմաններից մեկը եղավ: Այնուհանդերձ նկատելի է, որ եթե Տրդատ Մեծի (287–330 թթ.) և Խոսրով Բ-ի (330–338 թթ.) գահակալության ընթացքում Հայաստանը վարում էր հռոմեամետ քաղաքականություն, ապա Տիրան (339–350 թթ.) և Արշակ Բ (350–368 թթ.) թագավորները երկդիմի կողմնորոշում ունեին:

Հայաստանում քրիստոնեության ընդունմամբ ձևավորված կաթողիկոսական իշխանությունը տրվեց Ս. Գրիգոր Լուսավորչին (301–325 թթ.), որը սերում էր Պարթև Արշակունիների տոհմից և Հայաստանում իշխող հայ Արշակունիների հետ ուներ ազգակցական կապեր: ➥ էջ 4, 7

Արցախի հոգևոր-մշակութային ցեղասպանությունը և պատմության զեղծարարությունն Ադրբեջանի կողմից. վտանգներ և հակադարձումներ

Հարցազրույց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Արցախի հոգևոր թեմի խորհրդի անդամ, Արցախի թեմի գրասենյակի ղեկավար, պ. գ. թ. Մելանյա Բալայանի հետ

— Տիկի՛ն Բալայան, ինչպե՞ս ստացվեց, որ ընդամենը մեկդարյա պատմություն ունեցող արհեստածին պետությունն այսօր իրեն համարում է Աղվանից երկրի իրավահաջորդ, ավելին՝ փորձում է ամբողջ աշխարհին համոզել դրանում: Մի՞թե դա այդքան հեշտ է:

— Ձեր հարցում պատասխանի հիմնական մասն առկա է: Նկատի ունեմ «արհեստածին պետություն» ձևակերպումը, որը տեղին է: Այսինքն՝ պետությունը հայտ է ներկայացնում, այսպես ասած, իրավական ձևակերպում ստանալու, այն է՝ դե յուրե ճանաչվելու համապատասխան միջազգային կառույցների կողմից, բայց մերժում է ստանում, քանի որ դրա համար կան պարտադիր չափորոշիչներ: Այդ չափորոշիչներից կարևորագույնը տարածքն է, որին նա հավակնում է: Տարածքը, առաջին հերթին, հայրենիքն է: Հայրենիքը սոսկ բառային ձևակերպում չէ, այն կարևորագույն ու անգնահատելի արժեք է:

Երբ 1918 թ. Այսրկովկասում իրենց անկախ հռչակեցին Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունները, հետագայում Ազգերի լիգայի կողմից չճանաչվեց հենց Ադրբեջանի Հանրապետությունը, և մերժման գլխավոր պատճառը կամ հիմնավորումն այն էր, որ այդ երկիրը չէր տիրապետում այն տարածքներին, որոնց հավակնում էր: Հետևաբար՝ այդ պետությունն իրապես արհեստածին է, և ամենևին էլ պատահական չեն հենց այս ուղղությամբ Ադրբեջանի անդադրում աշխատանքները: Հանուն այդ կեղծիքի իրագործման՝ նա ոչինչ չի խնայում՝ օգտագործելով իր ամբողջ ներուժը:

— Ադրբեջանն այսօր հաղթողի դերում է: Արցախը բռնազավթված է, բայց ավելի վտանգավորը պատմությունը վերջնականորեն ջնջելու փորձերն են, որն ակնհայտ է դառնում արցախյան դարավոր եկեղեցիների ու վանքերի աղվանացման կամ իսպառ ոչնչացման քաղաքականությամբ: Ավելին՝ Վատիկանի «L'Osservatore Romano» պաշտոնական պարբերականում Ռոսսելա Ֆաբիանիի ստորագրությամբ օրերս լույս է տեսել «Քրիստոնեության ակունքներն Ադրբեջանում. ալբանական առաքելական եկեղեցու հետքերով» վերտառությամբ հոդվածը, ուր հեղինակը ներկայացնում է «Կովկասյան Ալբանիա»՝ Արցախ կատարած իր ուսումնասիրական-ճանաչողական այցը: Ինչ ենք մենք անում այս և նման կեղծարարություններին հակադարձելու համար և որտե՞ղ ենք թերանում:

— Նախ՝ ես հաղթողի պահվածք չէի անվանի, համենայնդեպս, առ ներկա պահը: Եթե անգամ հպանցիկ ուշադրություն դարձնենք Ադրբեջանի կողմից իրականացվող քայլերին, ապա ճիշտ հակառակ գնահատականը կարող ենք տալ: Այո՛, Արցախը բռնազավթված է Ադրբեջանի կողմից, սակայն Ադրբեջանի պահվածքը ներկա դրությամբ լոկ իր հանցավոր գործողություններն ամեն գնով հիմնավորելու փորձեր են, ընդ որում՝ հենց այդ հիմնավորումներն էլ տարօրինակ են: Այլապես ինչպե՞ս հասկանանք, երբ մի կողմից համացանցը ողողված է վանդալիզմի տեսանյութերով, որտեղ ծաղրում, վայրենաբար ոչնչացնում են Արցախի հայկական պատմական հուշարձանները, իսկ մյուս կողմից՝ փորձում են ամեն կերպ հիմնավորել, որ քրիստոնեական ժառանգության կրողը ոչ թե հայ ժողովուրդն է, այլ ուրիշները. կարծես մենք որևէ առնչություն չունենք այդ ժառանգության հետ: Ի վերջո, լավ կլիներ՝ կողմնորոշվեն: Թեկուզև իրականությունը շատ հստակ է նաև իրենց համար: Պարզապես պատմագիտությունը քաղաքական նպատակներին ծառայեցնելը՝ ինքնըստինքյան այդ գիտության նսեմացման ճանապարհով, պետք է որ համարժեք գնահատական ստանա ոչ միայն հայկական, այլև տարբեր երկրների ծանրակշիռ գիտական կենտրոնների կողմից:

Ի դեպ, Կովկասի հարցերով բրիտանացի հայտնի փորձագետ, Ղարաբաղյան հիմնահարցին նվիրված «Սև այգի» հայտնի աշխատության հեղինակ Թոմաս դե Վաալը, որի հետ անձամբ Արցախի պատմության հարցերի շուրջ քննարկումներ եմ ունեցել, վերջերս «բավական տարօրինակ» է որակել Ադրբեջանի դրսևորած վարքագիծը՝ նշելով, որ նման թեզն «ունի ընդգծված քաղաքական ենթատեքստ» և ուղղակի նպատակ՝ պնդելու, թե հայերը «Լեռնային Ղարաբաղի նկատմամբ հավակնություններ ներկայացնելու որևէ հիմք չունեն»: Նա միևնույն ժամանակ տարբեր հարցազրույցներում իր հիմնավոր մտահոգությունն է հայտնել Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային ժառանգությանն սպառնացող վտանգների կապակցությամբ:

Ինչ վերաբերում է Ձեր մատնանշած, Վատիկանում հրատարակված նյութին՝ "L'Osservatore Romano" պաշտոնաթերթում հրատարակված "A Khudavang, Ganjasar e Khatiravang Monasteri tra le nuvole" վերնագրով («Դադիվանքը, Գանձասարը և Խաթրավանքը ամպերի մեջ») գրառմանը, ես այն գիտական հոդված չեմ կարող անվանել, քանի որ աղբյուրագիտական հենքից և տրամաբանական, վերլուծական հիմնավորումներից միանգամայն զուրկ և ընդհանրապես ոչինչ չասող ինչ-որ հորինվածք է և, իմ կարծիքով, չարժե անգամ ուշադրության արժանացնել այդպիսի հրապարակումներին: Ադրբեջանի հյուրընկալությունը վայելած և Դադիվանք, Գանձասար, Խաթրավանք այցելած «գիտնականի» կեցվածքով հարգարժան զբոսաշրջիկն ըստ էության ջանացել է հանրության հետաքրքրությունը շարժող վարկածներ շրջանառել թե՛ քրիստոնեության տարածման և թե՛ հիշյալ հայկական նշանավոր հոգևոր կենտրոնները աղվանական ժառանգության արժեքներ ներկայացնելու առումով՝ առանց փոքր-ինչ պատկերացում ունենալու, թե իրականում ինչ են իրենցից ներկայացնում ընդհանրապես Աղվանքը կամ իր մատնանշած Աղվանից եկեղեցին: Նյութի հեղինակը Դադիվանքի, Գանձասարի, Խաթրավանքի՝ տասնյակ հարյուրերի հասնող վիմագրերից գոնե մեկին փորձե՞լ է ծանոթանալ՝ հասկանալու համար, թե դրանք ի՞նչ լեզվով են գրված և ի՞նչ տեղեկություններ են հաղորդում:

Համենայն դեպս, վստահ եմ, որ գիտական ծանրակշիռ կենտրոնների, շրջանակների համար այն չի կարող որևէ արժեք ներկայացնել, որովհետև, ինչպես արդեն նշեցի, աղբյուրագիտական հենքից միանգամայն զուրկ է:

Իմ կարծիքով՝ մենք պետք է մեր փաստերը համարժեք և ճշգրիտ հիմնավորումներով շարունակաբար ներկայացնենք ամենատարբեր հարթակներում, որպեսզի հանրությունը ճիշտ պատկերացում կազմի թե՛ տեղի ունեցած իրադարձությունների և թե՛ ընդհանրության մեջ մեր ժողովրդի պատմական կենսագրության ու թողած իրական հոգևոր-պատմամշակութային ժառանգության վերաբերյալ:

— Ադրբեջանը Արցախի բռնազավթված տարածքներում հետևողականորեն շարունակում է մշակութային ցեղասպանության ծրագիրը: Հստակ տեղեկություններ ունե՞ք, թե ո՞ր կամ որքա՞ն պատմամշակութային արժեքներ են մինչև այժմ ոչնչացվել:

— Հստակ ասել, թե լիարժեք պատկերացում ունենք ամբողջ կատարվածի մասին, ճիշտ չէր լինի, որովհետև հիմնական տեղեկատվությունը համացանցային նյութերից է ստացվում: Բայց և այնպես, մինչև ներկա պահը հայկական տարբեր գիտական կենտրոնների կողմից իրականացվող ուսումնասիրությունները հիմք են տալիս գոնե ընդհանրական ձևով պատկերացում կազմելու տեղի ունեցող վանդալիզմի դրսևորումների մասին: Իսկ դրանք բավականին շատ են և հատկապես 2023 թ. հայտնի իրադարձություններից հետո միանգամայն աննախադեպ ծավալներ են ընդունել: Ոչնչացվում են ամբողջական գյուղեր՝ իրենց ողջ պատմամշակութային ժառանգությամբ: Իսկ միջազգային համապատասխան կառույցները, դժբախտաբար, անտարբեր կեցվածք են ընդունել:

— Ըստ Ձեզ՝ ի՞նչ ճանապարհով կարելի է առավել նպատակակետային հակադարձել Ադրբեջանի կեղծ քարոզչությանը, թե՞ մենք փոքր-ինչ ուշացել ենք:

— Ուշացման մասով այնքան էլ համամիտ չեմ: Ինչ վերաբերում է կեղծ քարոզչությանը, ապա դրան, Ձեր իսկ բնորոշմամբ, նպատակակետային հակադարձելու լավագույն տարբերակը հիմնավոր փաստերով և գիտական պատշաճ մակարդակով իրականությունը ներկայացնելն է: Այս ուղղությամբ աշխատանքներ ամենատարբեր և հատկապես էլեկտրոնային, համացանցային հարթակներում տարվում են հայկական մի շարք գիտական, ակադեմիական կազմակերպությունների, առանձին անհատների կողմից:

Տեղին եմ համարում ընդգծել նաև, որ տարբեր ազգերի գիտնականների համար մեր տարածաշրջանի ուսումնասիրությունների ընթացքում թե՛ անցյալում և թե՛ ներկայում կարևոր հիմք են եղել և մնում են հիմնականում հայկական սկզբնաղբյուրները, ինչն էլ միանգամայն տրամաբանական է: Բայց և ստիպված ենք արձանագրել, որ երբեմն հենց սկզբնաղբյուրների օգտագործման գործընթացում էլ թույլ են տրվում ոչ համարժեք գիտական մոտեցումներ ու նպատակային խեղաթյուրումներ՝ պայմանավորված հատկապես քաղաքական շարժառիթներով: Եվ այս առումով բացառություն չեն ոչ միայն ադրբեջանցի պատմաբանները, որոնք, իրենց քաղաքական շահերով պայմանավորված, կամայականորեն օգտագործելով հայկական սկզբնաղբյուրների տարբեր թարգմանությունները, խառնաշփոթ են ստեղծել թե՛ Արևելյան Այսրկովկասի, թե՛ Հայ Աղվանից եկեղեցու պատմության շուրջ և իրենց հորինած հակագիտական, միանգամայն հիմնազուրկ «պատմությունները», պատմագիտության անվան տակ ողողելով ամենատարբեր գիտական, տեղեկատվական, քարոզչական հարթակներ, բացասական ազդեցություն են ունեցել, ունենում և շարունակաբար ունենալու են ժողովուրդների հարաբերությունների վրա՝ քաղաքական անցանկալի հետևանքներով:

— Ի վերջո հայկական ժառանգության ոչնչացման քաղաքականությունն արդյո՞ք չի հակասում Բաքվի ու Երևանի հաշտության հայտարարություններին:

— Միանշանակ հակասում է:

— Շնորհակալ եմ հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝
ՀԵՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆԻ

ՆԱԽԷ... ԱՆՍԿԻԶԲ ՈՒ ԱՆՎԵՐՋ, ԱՆՔՆԻՆ ԵՎ ԱՆԸՍՏԳՅՈՒՏ...

Վկայության Խորանը

«Ամպը ծածկեց Վկայության խորանը, և խորանը լցվեց Տիրոջ փառքով»:
Ելք 40:32

Ելից գրքի 25—40 գլուխները պատմում են Վկայության Խորանի, դրա պատրաստման և ահարոնյան քահանայության հաստատման մասին՝ բացառությամբ 32—34 գլուխների, որտեղ խոսվում է ոսկե հորթի և դրա հետ կապված իրադարձությունների մասին: Այս թեմաների կարևորությունն առաջին հերթին փաստվում է դրանց նվիրված գլուխների թվաքանակով՝ 16: Հրեական շաբաթական ընթերցումների ցանկում այս 16 գլուխներն ընդգրկված են 5 տարբեր խմբերում՝ Տրումա, Տեցավե, Կի-տիսա, Վայախկել, Պկուդեյ: Յուրաքանչյուր խումբ ունի իր համապատասխան զույգը, օրինակ՝ սրանցից առաջին երկուսը, որոնցում Տիրոջ համար Սրբարան կառուցելու հրահանգ է տրվում, և վերջին երկուսը, որտեղ տեսնում ենք այդ հրահանգի իրականացումը՝ Վկայության խորանի կառուցումը: Այս երկուսի միջև զետեղված է Կի-տիսա խումբը, որը Ելից գրքում չունի իր համապատասխան զույգը. այն Ղևտականում է՝ շաբաթական ընթերցումների Շմինի խմբում (Ղևտ. 9:1—11:47), որտեղ ներկայացված է Նադաբի և Աբիուդի մեղքը: Երկուսի պարագային էլ ականատես ենք լինում հոգևոր մեծ ճգնաժամի, երբ քահանաները չեն կատարում Մովսեսի պատվիրած հրահանգները: ➥ էջ 4, 5

Վկայության խորանի նախօրինակ՝ ներկայիս Թիմնա ազգային զբոսայգում, Իսրայել:

Վկայության Խորանը

➥ էջ 3

Տրումա (ընծա) բառը, որ կիրառված է 25:2-ում, նշանակում է այնպիսի մի բան, որը պետք է բարձրացվի «հոգևոր իմաստով». այն ամենը, ինչ Իսրայելի որդիները կտան իրենց ունեցվածքից Վկայության խորանի կառուցման համար, կդառնա յուրահատուկ, վեհացված և օգտակար բան, որ կկիրառվի Բարձրյալի համար իրենից ներքև գտնվող աշխարհում բնակության վայր կառուցելու նպատակով: Այս ամենը ցույց է տալիս ժողովրդի պատրաստակամությունը՝ զոհաբերելու ամեն տեսակ թանկարժեք իր՝ հանուն Վկայության խորանի կառուցման:

Ինչի՞ համար է անհրաժեշտ նման Սրբարանը, և որտեղի՞ց այն կառուցելու գաղափարը:

Ելք 15:17-ում կարդում ենք. *«Տանելով հաստատիր նրանց քո ժառանգության լեռան վրա, որ պատրաստել ես քո բնակության համար և որ սրբություն ես դարձրել, Տե՛ր»*: Ստացվում է, որ գոյություն ունի այնպիսի մի տեղ, որը կարող է դառնալ Աստծու բնակության վայր, և որտեղ կարող է բնակվել Տիրոջ ներկայությունը: Փաստորեն, արդեն իսկ հրեա ժողովրդին Կարմիր ծովով անցկացնելուց հետո Մովսեսն իր օրհներգում ակնարկում է, որ եգիպտոսից ելքի նպատակը ոչ միայն Հայրերի երկիր մտնելն է, այլև Տիրոջ համար սրբարան կառուցելը: Շատ մեկնիչներ պնդում են, թե ոսկե հորթ պատրաստելու և այն պաշտելու պատճառով էր, որ Աստված կարգադրեց իր համար Սրբարան կառուցել, այնինչ Մովսեսի օրհներգն ապացուցում է հակառակը: Սուրբ Գիրքը ևս, ներկայացնելով դեպքերի նման հաջորդականություն, ցույց է տալիս, որ Սրբարանի կառուցման պատճառը ոսկե հորթը չէ: Հրեա հայտնի ռաբբիներից Մայմոնիդը առաջ է քաշում հետևյալ կարծիքը, համաձայն որի՝ Վկայության խորանն անհրաժեշտ էր հրեա ժողովրդին կռապաշտությունից հեռացնելու և Տիրոջ ծառայությանն ավելի մոտեցնելու համար: Եվ այստեղ առաջ է գալիս հաջորդ կարևոր հարցը. ինչո՞ւ որոշում կայացվեց կառուցելու ժամանակավոր Սրբարան (միշկան) անապատում, այլ ոչ թե սպասել Ավետյաց երկիր մտնելուն և այնտեղ կառուցել Սրբարան (միգդաշ): Հավանական պատասխաններից մեկը հետևյալն է. անհրաժեշտ էր որոշ ժամանակ, որ ամեն բան կատարվեր աստիճանաբար և ըստ հերթականության, այդ պատճառով է նաև, որ հրեաները 40 տարի մնացին անապատում: Իսկ ինչի՞ համար է անհրաժեշտ հստակ վայր, որտեղ մարդիկ կծառայեն Աստծուն, կաղոթեն և զոհ կմատուցեն նրան: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ սկզբնապես այս տեղը շարժական է և հետո միայն պիտի դառնա անշարժ՝ ի տարբերություն Վկայության խորանի:

Ստացվում է, որ նախ՝ Սրբարանի կառուցման գաղափարը շատ վաղուց կար Աստծո մտադրության մեջ, և երկրորդ՝ այդ Սրբարանը հանդիպման վայր է Աստծո և մարդու միջև, որովհետև եթե երկրագնդի վրա չկա աշխարհագրական մի կետ, որտեղ այդ հանդիպումը հնարավոր կդառնա, ապա կյանքը կորցնում է իր իմաստը. Աստված մնում է վերևում՝ երկնքում, մարդը՝ ներքևում՝ երկրի վրա:

25:8-ում Աստված ասում է. *«Ինձ համար սրբարան (միգդաշ) կկառուցես, որտեղ ես կերևեամ ձեզ»*, իսկ 25:9-ում ասում է. *«Կպատրաստես այնպես, ինչպես ցույց կտամ քեզ լեռան վրա՝ իբրև նախօրինակ խորանի (միշկան) ու նրա ողջ սպասքի: Այսպես պատրաստիր»:*

Ինչո՞ւ առաջին դեպքում սրբարան և երկրորդ դեպքում՝ խորան:

Մինչ Քանանի նվաճումը և հետագայում նաև Երուսաղեմի տաճարի (այն պիտի դառնար մշտական և անփոփոխ վայր բոլոր ժամանակների համար) կառուցումը Աստվածային ներկայությունը կապվում է անապատում գտնվող շարժական խորանի հետ: Սա այնպիսի մի վայր է, որտեղ պետք է տեղի ունենա երկխոսություն Աստծո և մարդկանց միջև. *«Ես քեզ կհայտնվեմ այնտեղ և քեզ հետ կխոսեմ Քավության վրայից՝ երկու քերովբեների մեջտեղից, որոնք Ուխտի տապանակի վրա են. ամեն անգամ, երբ ցանկանամ մի հրաման տալ Իսրայելի որդիներին»* (Ելք 25:22): Խորանը դիտարկվում էր որպես Աստծո ներկայության և Իսրայելի ժողովրդի, նրա առաջնորդների ու Աստծո հետ հանդիպման վայր:

Տրումա խմբում նկարագրվում է Վկայության խորանի այնպիսի պատկեր, որ նախատեսված է հոգևոր բարձր մակարդակի մարդկանց համար, նրանց համար, որոնք իրենց հոգում և սրտում չունեն չար բան, և ահա այսպիսի խորանի գլխավոր նպատակը պարզապես Աստծո հետ երկխոսությունն ապահովելն է: Իսկ զոհաբերությունը Վկայության խորանի երկրորդական գործառույթն է, որի միջոցով մարդիկ հնարավորություն են ստանում քավելու իրենց մեղքերը:

Սկզբնապես, 25:1-ում Աստված չի հրահանգում որևէ բան անել, այլ ասում է Մովսեսին, որ նա պարզապես փոխանցի Իր խոսքն Իսրայելի որդիներին: Այս դեպքում, փաստորեն, հույս է դրվում բարի կամքի դրսևորման վրա, երբ Խորան կառուցելու մասին միայն ասելը կամ այդ գաղափարը հաղորդելը բավարար է, որպեսզի մնացյալ ամեն բան ժողովուրդը կազմակերպի ինքնուրույն: Իսկ արդեն հետագա գլուխներում Աստված Իսրայելի որդիներին տալիս է հստակ պատվեր: Այսինքն՝ Օրենքը (Թորան) նախևառաջ հիմնվում է մարդու բարի կամքի դրսևորման վրա: Ինչո՞ւ: Որովհետև մարդ արարածն ի սկզբանե ստեղծվել է լավ և բարի, այդ պատճառով է, որ 25:1-ում հստակ պատվեր չկա, այլ կա խոսքի փոխանցում. այլ կերպ՝ թող Իսրայելի որդիներն իմանան, որ նման գաղափար կա. թե ինչպես կվարվեն հետո, դա այլ հարց է: Նախքան 28-րդ գլուխը խոսք չկա նաև քահանայության հաստատման, քահանայական զգեստների պատրաստության մասին, և մինչ այստեղ հիշատակվող միակ մարդը Մովսեսն է, հետևապես՝ բարի կամքի դրսևորում, այսինքն՝ ինքնակամ ընծաներ տալ խորանի կառուցման համար, այս դեպքում ունի միայն Մովսեսը: Ստացվում է, որ Վկայության խորանի այս իդեալական տարբերակը նախատեսված է Մովսեսի և նրա տեսակի մարդկանց համար:

Վկայության խորանի կառուցվածքը

Իսկ ի՞նչ կառուցվածք ուներ Վկայության խորանը:

Վկայության խորանը կառուցված էր այնպես, որ այն հեշտությամբ հնարավոր էր հավաքել և տեղափոխել որևէ այլ վայր:

➥ էջ 5

Եկեղեցի-պետություն հարաբերությունները 4-րդ դարում: Ներսես Մեծ և Պապ թագավոր

➥ էջ 2

Տրդատ Մեծի գահակալության ընթացքում նոր ձևավորվող Հայ Եկեղեցուն նյութական մեծ օժանդակություն տրվեց, ինչի մասին մեզ տեղեկություն է հաղորդում Ագաթանգեղոս պատմիչը. «Այսպես էլ թագավորը իր ամբողջ իշխանության մեջ առհասարակ նշանակեց չորսական ծխի հողաբաժին բոլոր ագարակ տեղերում, իսկ ավաններում՝ յոթական ծխի հողաբաժին, ի ծառայություն սպասավորության քահանայության որպես նվեր պտղի՝ Տիրոջ մատուցեց» (Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 467): Լուսավորչի ժառանգները Հայ Եկեղեցու առաջնորդությունը որոշ ընդհատումներով իրականացրին ավելի քան մեկ դար: Այդ տարիների ընթացքում նրանք մշտապես օժանդակեցին թագավորական իշխանության ամրապնդմանը: Սրա լավագույն վկայությունը թե՛ Խոսրով Բ-ի, թե՛ Տիրանի թագավորական գահին բազմելն էր, ինչին մեծ աջակցություն ցուցաբերեցին Արիստակես (325–333 թթ.) և Վրթանես (333–341 թթ.) հայրապետերը:

Սակայն Տիրան թագավորի գահակալության շրջանում թագավորական և կաթողիկոսական իշխանությունների հարաբերությունները վատթարանում են, որի պատճառ էր դարձել ոչ միայն եկեղեցի-պետություն հարաբերություններում առաջացած վիհը, այլև՝ ընտանիքներում եղած ներքին թշնամությունը: Բանն այն է, որ Հուսիկը մինչկաթողիկոսության շրջանում կնության էր առել Տիրանի քրոջը, սակայն, ըստ Փավստոս Բուզանդի, զավակներ ունենալուց հետո նա, թողնելով կնոջը և աշխարհիկ կյանքը, իրեն նվիրում է Քրիստոսի սպասավորությանը՝ նմանողությամբ իր նախնյաց, ինչի պատճառով «թագավորի տունը նրա հետ թշնամացել էր, և մինչ աներները այս բանի համար նրան զզվեցնում էին, կինը մեռավ, և Հուսիկը աներոջ ձեռքից ազատվեց» (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 2015, էջ 69): Բացի այդ՝ հեթանոսական մտայնությունը դեռևս պահպանվել էր, ինչը Հուսիկ կաթողիկոսի կողմից մշտապես հանդիմանության առիթ էր դարձել: Այս լարվածությունը հանգեցրեց նրան, որ Տիրանի հրամանով Հուսիկը սպանվեց, իսկ կաթողիկոսական աթոռը հանձնվեց Աղբիանոսյան տոհմից Փառենին (348–352 թթ.):

Ներսես Ա Մեծ (մոտ 329—373), Ամենայն Հայոց Կաթողիկոս (353—373)

Պապ (353—374), Մեծ Հայքի արքա (370—374)

Սրան զուգահեռ՝ Տիրանի վարած արտաքին և ներքին սխալ քաղաքականությունն ի վերջո հանգեցրեց քաղաքական կյանքի ձախողմանը և նրա դժբախտ վախճանին:

Տիրանին հաջորդած Արշակ Բ թագավորն սկզբնական շրջանում փորձեց շտկել իրավիճակը: Ներքին քաղաքական կյանքի կայունացման նպատակով նա կարգավորեց հարաբերությունները մի շարք նախարարական ընտանիքների և Եկեղեցու հետ, որի համար հայրապետական գահին բազմեցրեց Լուսավորչի տոհմից Ներսեսին (353–373 թթ.), որը Հուսիկի թոռն էր, նրա Աթանագինե որդու զավակը, իսկ հայոց սպարապետ կարգեց Վասակ Մամիկոնյանին, ինչի կապակցությամբ պատմիչը գրում է. «Եվ Հայաստան աշխարհի թագավորությունը նորոգվեց ու պայծառացավ, ինչպես առաջ. մեծամեծներն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում» (Բուզանդ, էջ 69):

Արշակ Բ-ն հարաբերությունները կարգավորեց նաև Հռոմի ու Սասանյան Պարսկաստանի հետ և, ինչպես վկայում է Բուզանդը, Հայաստանը «երկու թագավորների միջև խաղաղվեց, բարեկարգվեց, կազմակերպվեց»: Այդ նպատակով նա շուրջ 353 թ. իր սենեկապետ Ներսեսի (ապագա կաթողիկոսի) գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկում Հռոմ, որպեսզի «կայսեր ու իրենց միջև եղած համաձայնության ու խաղաղության դաշինքը նորոգեն» (Բուզանդ, էջ 82): Կնքված դաշինքն ամրապնդվում է Արշակ արքայի և Կոստանդիոս կայսեր վաղամեռ գահակից եղբոր՝ Կոստանսի նշանած Օլիմպիայի ամուսնությամբ: Բացի այդ՝ պատանդությունից Հայաստան վերադարձան արքայի զարմիկները՝ Գնելը և Տիրիթը:

Բազմելով կաթողիկոսական գահին՝ Ներսես Մեծն անմիջապես ձեռնամուխ է լինում մի շարք կարևոր բարեփոխումների իրականացմանը, որոնց միջոցով պիտի հաղթահարվեին հեթանոսության մնացուկները, և տարածվեին քրիստոնեությանը բնորոշ գաղափարներ ու բարոյական արժեքներ: Այս առումով չափազանց կարևոր է 354 թ. գումարված Աշտիշատի ժողովը, որտեղ կայացվեցին ոչ միայն կրոնա-եկեղեցական, այլև հասարակական-սոցիալական հարաբերություններին վերաբերող որոշումներ, որոնք մեզ են փոխանցվել թե՛ Մովսես Խորենացու, թե՛ Փավստոս Բուզանդի կողմից: Ժողովական այս որոշումներն անմիջապես կյանքի կոչվեցին: Նախ հիմնվեցին բարեգործական հաստատություններ՝ ուրկանոցներ և բորոտանոցներ, որբերի, ծերերի ու աղքատների համար նախատեսված վայրեր, որոնց շնորհիվ խնամքից և հոգածությունից զուրկ սոցիալական այս շերտերը եկեղեցու հոգածության ներքո առնվեցին: Կառուցվեցին իջևանատներ՝ օտարականներին ու հյուրերին կողոպտվելու և այլ վտանգներից պաշտպանելու համար: Ներսես կաթողիկոսը մշտապես հիշեցնում էր Քրիստոսի խոսքերը, որ Նա ասաց մի մեծատունի. «Ինչ-որ ունես, վաճառի՛ր ու տո՛ւր աղքատներին և երկնքում գանձեր կունենաս և արի՛ իմ հետևից» (Ղուկ. 18:22): Հայրապետը այս հաստատությունները հանձնեց իր հավատարիմ Խադ եպիսկոպոսի տեսչությանը, իսկ դրանց աջակցության համար հատկացրեց Եկեղեցու կալվածքներից գյուղեր և ագարակներ: ➥ էջ 7

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Թումանյանի ընտանիքը՝ անանց արժեքի մանրակերտ

21-րդ դարի հարափոփոխ և գրեթե անվերահսկելի պայմաններում փոփոխության են ենթարկվում նաև ընտանիքի՝ որպես հասարակական կարևորագույն ինստիտուտի կառուցվածքն ու դիմագիծը: Այսօր էլ շարունակվում են փոխվել ընտանեկան շատ արժեքներ, ընտանիքին ներկայացվող պահանջներ, դերեր ու դերային սպասումներ, միջանձնային հարաբերությունների առանձնահատկություններ և ավանդույթներ:

Հայ ընտանիքն իր դարավոր քաղաքակրթության մեջ ապրել է զարգացման երկար գործընթաց, այնուհանդերձ, աշխարհաքաղաքական փոփոխություններն իրենց ներգործությունն են ունենում նաև նրա վրա: Իրապես փոխվել են միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները, ծնողասիրության ու զավակասիրության որակները, ընկերային դերերը, հոգեբանական բնութագրերը:

Ո՞րն է ընտանիքի այն օրինակելի տիպարը, որ կարելի է ուսանելի դարձնել սերունդների համար: Այս առումով ուշագրավ է Հովհաննես Թումանյանի ընտանիքը՝ կայուն համակարգի, նրանում պահպանվող և ձևավորված ավանդույթների ու սովորույթների, միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունների առումով, որոնց մասին տեղեկանում ենք Թումանյան ընտանիքից պահպանված նամակագրության և այլ վավերագրերի հարուստ ժառանգության էջերում, Թումանյանի և նրա զավակների ու ժամանակակիցների հուշագրություններում:

Բազմանդամ ընտանիքն, անշուշտ, նաև շատ հոգսեր էր դնում Հովի. Թումանյանի ուսերին, բայց բանաստեղծն արարչական հոգատարությամբ, անսպառ սիրով, համբերությամբ ու քրիստոնեական խոհեմությամբ էր տանում մեծ ընտանիքի հոգսերը: Կինը՝ Օլգա Թումանյանը ևս ժպիտը երեսին ու սիրով էր հոգում ոչ միայն մեծ ընտանիքի կարիքները, այլև բանաստեղծ ամուսնու քմահաճույքները: Մարտիրոս Սարյանի հուշերում ընթերցում ենք. «Հմայիչ էր Հովի. Թումանյանը՝ որպես բանաստեղծ և մարդ: Նա իր մեջ կրում էր ժողովրդի լավագույն գծերը. գրականության մեջ՝ սեր դեպի ժողովրդական ստեղծագործությունը, իսկ կյանքում՝ լայն հյուրասիրություն և սեր դեպի իր ընտանիքն ու երեխաները»:

Ընտանիքում տիրող կարգ ու կանոն, ընտանեկան հավաքույթներ ու միջոցառումներ, որոնք միջանձնային շփումների մշակույթ ձևավորելուց զատ նաև գեղագիտական կրթության և դաստիարակության միջավայր էին ստեղծում, սրտառուչ և գորովալից վերաբերմունք մեկը մյուսի նկատմամբ, նամակագրության, ընտանեկան խաղերի, ընթերցանության ու ստեղծագործելու մշակույթ: Կարգ ու կանոնին հետևելը գալիս էր հայր Հովհաննես Թումանյանից. կարգ ու կանոն ամեն ինչի մեջ՝ սկսած մանրուքներից:

Հյուրասիրությունն այս մեծ ընտանիքի ամենաընդգծված առանձնահատկությունն էր: Դա նահապետական-ավանդական հյուրասիրություն էր, որ սովորաբար իրականացվում էր Հովհաննես Թումանյանի նախաձեռնությամբ և Օլգա մայրիկի անտրտունջ ու սիրալիր աշխատանքով: Անշուշտ, հյուրասիրության՝ ծիսակարգի նմանվող արարողության մեջ ուրույն տեղ ունեին նաև Թումանյանի դուստրերը: Թումանյան ընտանիքի շատ ու շատ հայտնի հյուրեր հետագայում իրենց հուշերում անդրադարձել են հատկապես ընտանիքի հյուրընկալությանը: Զաբել Եսայանի հուշերում ընթերցում ենք. «Անիկա բազմանդամ ընտանիքի տեր էր, և անոր կինը՝ տիկին Թումանյանը, զարմանալի համբերությամբ և սիրալիրությամբ ընդառաջ կերթար իր ամուսնույն ցանկություններուն: Տանը մեջ աղախին և ծառայող չի կար: Կինը և աղջիկները կը ստանձնեին տնային բոլոր գործերը և անվերջ հյուրերու սպասարկելու անսպառ գործը: Եվ ամենքն ալ տանը մեջ մինչև ամենեն փոքրերը ժպտուն էին և սիրալիր հայրիկին հյուրերու հետ: Այցելուներեն ոմանք կերթային տիկնոջը մոտ, պատշգամբը կամ նույնիսկ խոհանոցը, ոմանք՝ Նվարդի մոտ, որ այդ շրջանին ինձ մելամաղձոտ կը թվեր և կառանձնանար իր սենյակը, և ոմանք խաղ կընեին փոքրերու հետ: Ծիծաղը և ուրախ կանչերը կը բարձրանային պատշգամբեն, հարակից սենյակներեն... Ինչքա՜ն հյուրընկալ և քաղցր էր Հովի. Թումանյանի տունը այդ օրերուն»:

Նամակագրության մշակույթը՝ իբրև ընտանեկան ամրագրված արժեք, վկայում է այդ մեծ ընտանիքում տիրող համերաշխության և միջանձնային խոր ու ամբողջանվեր շփումների մասին: Նվարդ Թումանյանի՝ հորն ուղղված նամակները լեցուն են գորովանքով, սրտացավությամբ ու անսահման սիրով: Կարևորելով հոր նամակագրության դերը՝ Նվարդ Թումանյանը նրան ուղղված նամակներից մեկում գրում է. «Երեկ ստացանք նամակդ, և դա այնքան ուրախացրեց մեզ բոլորիս: Անձամբ ինձ համար դա ամենաթանկ նվերն էր, չէ՞ որ դու գիտես, թե որքան թանկ են մեզ համար քո խոսքը, քո գուրգուրանքը, խորհուրդները և մեր մտերիմ զրույցը: Հայրիկ, խոնարհաբար խնդրում եմ՝ ավելի հաճախ նամակներ գրիր, եթե շաբաթը մեկ անգամ, ոչինչ, բայց աշխատիր հնարավորինս մանրամասն: Ավելի մանրամասն գրիր քո տրամադրության մասին, հոգեվիճակիդ մասին, գործիդ, զբաղմունքիդ մասին – մի խոսքով, ամեն ամենի մասին»:

Թումանյանի ընտանիքի կարևորագույն արժեքներից էր ընթերցանության մշակույթը:

➥ էջ 6

Վկայության Խորանը

➥ էջ 3, 4

Հորդանանն անցնելուց հետո հրեաների առաջին ճամբարը եղավ Գաղգաղան. խորանն այստեղ մնաց յոթ տարի, ապա տեղափոխվեց Սելով և այստեղ մնաց Դատավորների շրջանում մինչև Հեղի քահանայապետի օրերը, այնուհետև եղավ Նոմբա և Գաբավոն քաղաքներում. վերջին անգամ այն հիշատակվում է Ա Մնացորդաց 21:29-ում: Վկայության խորանի մասերն են՝

1. Խորանի շրջափակը: Ելից գրքի 27-րդ գլխում Տերը պատվիրում է Խորանի առաջ շինել բակ, որն ուղղանկյուն քառանկյան տեսք ուներ՝ 50 մ երկարությամբ (20 սյուներով), 25 մ լայնությամբ (10 սյուներով): Մուտքը արևելյան կողմից էր: Խորանի դռան դիմաց գտնվում էր պղնձե ավազանը, որի մեջ Ահարոնն ու իր որդիները պետք է լվանային իրենց ձեռքերն ու ոտքերը (Ելք 30:17–21): Ավազանի դիմաց գտնվում էր զոհասեղանը:

2. Խորանը: Խորանը 15 մ երկարությամբ, 5 մ լայնությամբ և 5 մ բարձրությամբ շինվածք էր՝ կազմված երկու բաժիններից՝ Սրբարան (Արտաքին Սրահ) և Սրբություն Սրբութեանց (Ներքին Սրբարան): Սրանցից առաջինում էին գտնվում խնկարկության սեղանը, առաջավորության հացի սեղանը և աշտանակը: Քահանաները կանոնավոր կերպով առավոտյան և երեկոյան խունկ էին մատուցում, ապահովում աշտանակի մշտական լուսավառումը և ամեն շաբաթ փոխում Առաջավորության հացերը: Ներքին սրահում էր գտնվում Տիրոջ ուխտի տապանակը. այստեղ իրավունք ուներ մտնելու միայն քահանայապետը տարին մեկ անգամ՝ Մեղքերի քավության օրը. *«Ահարոնը տարին մեկ անգամ խնկարկության սեղանի եղջյուրների վրա մեղքերի թողության և քավության ծես պետք է անի մեղքերի քավության համար զոհվող կենդանու արյամբ: Նրա սերունդները տարին մեկ անգամ թող սրբագործեն այն, որովհետև դա Տիրոջ Սրբությունների Սրբությունն է»* (Ելք 30:10):

Որո՞նք են Վկայության խորանի պարագաները.

1. *Ուխտի տապանակ*: Ինչի՞ համար է այն նախատեսված: Տապանակն անհրաժեշտ է «վկայությունների»՝ քարե տախտակների պահպանման համար. *«Տապանակի մեջ կդնես վկայության այն տախտակները, որ ես պիտի տամ քեզ»* (Ելք 25:16): Այն Աստծո հոգևոր ներկայության արտաքին վկայությունն էր իր ժողովրդի մեջ: Տապանակը ներսից ու դրսից պատված էր ոսկով, իսկ կափարիչը՝ Քավություն, ամբողջությամբ պատրաստված էր մաքուր ոսկուց: Թալմուդում ասվում է, որ կափարիչի հաստությունը մարդու ձեռքի ափի չափ է եղել, և այն այնպիսի կարևորություն է ունեցել, որ Ա Մնաց. 28:11-ում Սրբություն Սրբութեանցն անվանվում է կապոռետ-քավություն: Արմատը, որից գալիս է «կապոռետ» բառը, նշանակում է ոչ միայն փակել, այլև մաքրել և սրբել: Քավության երկու ծայրերին եղել են Քերովբեներ, որոնք համարվում էին ուխտի տապանակի խորհրդանշական պահապանները: Ըստ հրեական բանավոր ավանդության՝ դրանք ունեցել են տղամարդու և կնոջ դեմքեր: Իրար միանալով՝ դրանք կարծես մեկ ամբողջություն էին դառնում, իսկ այդ միությունը խորհրդանշում էր Աստծո մերձավորությունը մարդուն, Նրա պատրաստակամությունը՝ օգնելու իր ժողովրդին: Աստված ցանկացած պահի աներևույթ կերպով կարծես պատրաստ է իջնելու երկնքից՝ օգնական ու փրկիչ լինելու նեղության և դժբախտության մեջ եղող մարդուն կամ ազգին: Պատկերը հետևյալն է. տապանակից, որի մեջ քարե տախտակներն են, այսինքն՝ Օրենքը, վեր են բարձրանում Քերովբեները. խորհրդանշական կերպով կարող ենք ասել, որ այս դեպքում Օրենքից ծնվում է Սերը: Իսկ ո՞րն է այս ամենի նպատակը: Իհարկե, հանդիպումը և Աստծո հետ երկխոսությունը. *«Ես քեզ կհայտնվեմ այնտեղ և քեզ հետ կխոսեմ Քավության վրայից՝ երկու քերովբեների մեջտեղից, որոնք Ուխտի տապանակի վրա են. ամեն անգամ, երբ ցանկանամ մի հրաման տալ Իսրայելի որդիներին»* (Ելք 25:22): Սա նաև ծառայում է իբրև մշտական հիշեցում հրեա ժողովրդին, որ Աստծո վկայությունը՝ Օրենքը, մշտապես պետք է առաջնորդի ու վերահսկի իրենց կյանքը: Միայն ինքն իրենով տապանակը որևէ իմաստ չունի, եթե Վկայության տախտակները դրա մեջ դրված չեն: Հետևաբար՝ եթե ներկայումս կառուցվի Երուսաղեմի Տաճարը, կարող է լինել առանց ուխտի տապանակի, որովհետև չկան քարե տախտակները, որոնք կդրվեն դրա մեջ. *«Ու երբ երկրի վրա այն օրերին դուք բազմանաք ու աճեք,– ասում է Տերը,– այլևս չեն ասելու՝ «Իսրայելի Սուրբի Ուխտի տապանակը». չի հիշվելու այն, նրա անունն այնտեղ չի տրվելու, այլևս չի փնտրվելու այն, և նորը չի շինվելու»* (Երեմ. 3:16):

2. *Առաջավորության հացի սեղան*: Այն պատրաստված էր չփտող փայտից և պատված էր մաքուր ոսկով: Առաջավորության հացը մշտապես պիտի դրված լիներ Տիրոջ առաջ: Ղևտական 24:5–9-ում ասվում է, որ սեղանին դրվում էին թվով տասներկու հացեր, որոնք պատրաստված էին ցորենի՝ մանրակրկտորեն մաքրված և մաղված ալյուրից: Շաբաթ օրը հացերը դրվում էին սեղանին և այնտեղ թողնվում մինչև հաջորդ շաբաթ օրը: Հին հացերը վերցվում էին սեղանից և բաժանվում քահանաների միջև, որոնք էլ պիտի ուտեին այդ հացերը: Մշտական հրաշքով հացերը ոչ միայն չէին փչանում մեկ շաբաթվա ընթացքում, այլև մնում էին տաք և թարմ, ասես լինեին նոր պատրաստված: Հաց թխելու և այն սեղանին դնելու պատվերի իմաստը հետևյալն է. մարդն այս կերպ իր երախտագիտությունն է հայտնում Արարչին՝ Նրա ընձեռած ամեն բարիքի դիմաց: Հրեա մեկնիչներն ասում են, որ Առաջավորության հացը պատրաստվել է հատուկ բաղադրատոմսով:

Այս հատվածում Աստված պատվիրում է նաև պատրաստել խնկաղացներ, խնկատուփեր, գինի մատուցելու գավաթներ և սկիհներ՝ մաքուր ոսկուց:

3. *Աշտանակ*: Սա ևս պատրաստված էր մաքուր ոսկուց: Որոշ ուսումնասիրությունների համաձայն՝ դրա պատրաստման համար անհրաժեշտ է եղել մոտավորապես 50 կգ մաքուր ոսկի: Այն պետք է լիներ միաձույլ, ոչ թե կազմված տարբեր մասերից: Միդրաշներն իրենց հերթին նշում են, որ Մովսեսը լավ չի պատկերացրել աշտանակի պատրաստման բոլոր մանրամասները, և այդ պատճառով է, որ Աստված ասում է. *«Ուշադիր եղիր. կանես ըստ այն օրինակի, որ քեզ ցույց տրվեց լեռան վրա»* (Ելք 25:40): Պարզ բացատրությամբ այն լուսավորության և սրբության խորհրդանիշ է: Որոշ մեկնությունների համաձայն՝ աշտանակի լույսը խորհրդանշում է Աստվածային իմաստությունը, որոշների պնդմամբ էլ այն խորհրդանիշն է Կենաց Ծառի: Հայտնաբերվել են աշտանակների խճանկարային պատկերներ, որոնք վերաբերում են Նոր Կտակարանի ժամանակաշրջանին, երբ յոթ ճյուղ ունեցող աշտանակներն սկսեցին ընկալվել որպես հուդայականության և հավերժական կյանքի խորհրդանիշներ:

4. *Զոհասեղան*: Սա պատրաստված էր չփտող փայտից: Զոհաբերություն կատարելով՝ մարդն իրեն տրված ամեն բարիքի դիմաց Աստծուն իր երախտագիտությունն է հայտնում, և այդ կերպ ամեն բանի գոյության իմաստը, կարծես, բարոյականորեն արդարանում է: Եթե չկա զոհաբերություն, չկա կապ աշխարհի և այն ստեղծողի միջև, ուստի աշխարհը մնում է փակ, չի ճանաչում իր Արարչին, և այդպիսով իր գոյությունը դառնում է անիմաստ:

Ահա այս չորս հիմնական պարագաները ծառայում են Աստծու հետ մարդու երկխոսությունն ապահովելու համար: Հետագայում սրանց ավելացան ևս չորսը՝ խնկարկության սեղանը, պղնձե ավազանը, օծության յուղը և խունկը: Սրբարանը պատրաստող պաշտոնյաներն էին Բեսելիելը՝ Հուդայի ցեղից, և նրա օգնական Եղիաբը՝ Դանի ցեղից:

Արմենակ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գագիկ սրկ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գուստավ Գեչե. «Բիբլիական պատմություններ»

Աշխարհագրական միջավայրը

Աստվածաշնչյան և նորկտակարանյան պատմություններն աշխարհագրորեն կապված են Պաղեստինի և հարևան երկրների հետ: Հրեաները Պաղեստին էին անվանում երկրի արևմտյան՝ փղշտացիներով բնակեցված ծովափնյա հատվածը (Պաղեստին՝ փղշտացիների երկիր): Սկսած մ. թ. ա. 5-րդ դարից՝ հույները սկսեցին այդպես անվանել ամբողջ երկիրը: Հույներից հետո հռոմեացիները պահպանեցին այդ անվանումը: Հին Կտակարանում հաճախ հիշատակվում է Քանանը. այդպես էին անվանում Պաղեստինի, Սիրիայի և Փյունիկիայի տարածքը: Հին Կտակարանում կան նաև ուրիշ անվանումներ՝ Իսրայելի երկիր, Հրեաների երկիր, Յահվեի երկիր, Իսրայելի ժառանգություն, Սուրբ երկիր: Բաբելոնյան գերությունից հետո տարածվեց Հուդայի երկիր, ապա ուղղակի՝ Հրեաստան անվանումը: Նոր Կտակարանը Պաղեստինն անվանում է Խոստացված երկիր:

Սիրիայի հետ աշխարհագրական միասնություն կազմող Պաղեստինը գտնվում է Միջերկրական ծովի արևելյան ափին: Երկրի արևմուտքում գտնվում է Միջերկրական ծովը, հարավում՝ Արաբական անապատը, արևելքում՝ Սիրիական անապատը, իսկ հյուսիսում սահմանակից է Սիրիային և Փյունիկիային:

Պաղեստինն իրենից ներկայացնում է հսկայական սարահարթ, որը Հորդանան գետի հունով բաժանվում է երկու մասի՝ շրջապատված երկու լեռնաշղթաներով: Հյուսիսում ձգվում է Լիբանանի լեռնաշղթան, որը, իջնելով դեպի հարավ, վերածվում է լեռնոտ տեղանքի. նրան հետևում է Հեզրաելական հարթավայրը, որը վերածվում է Սամարիայի և Հրեաստանի լեռնոտ շրջանների: Հեզրաելական հարթավայրից արևմուտք գտնվում է Կարմել լեռը, հարավ-արևմուտքում՝ Գիլբոա լեռները, Սամարիական լեռներում՝ Գարիզիմ գագաթը, Հրեաստանի լեռներում՝ Երուսաղեմի բլուրը: Լիբանանից արևելք ընկած է Անտիլիբանանյան սարահարթը, որի գագաթն է Հերմոն լեռը. այն ծածկված է հավերժական ձյունով: Հարավում է Վասանը, որին հետևում է Գաղաադ սարահարթը, որ սահմանափակված է Մովաբյան լեռներով: Մեռյալ ծովից հարավ տարածվում է Եդոմ լեռնաշղթան, իջնում է դեպի Կարմիր ծով:

Պաղեստինի գլխավոր գետն է Հորդանանը, որն սկիզբ է առնում Հերմոն լեռան մոտ գտնվող երեք աղբյուրներից, հոսում ճահճուտ Մերոմ լճով, ապա՝ Գեննեսարեթ լճով և թափվում Մեռյալ ծով: Գեննեսարեթի լիճը (Գալիլեայի ծով, Տիբերական լիճ) ունի 21 կմ երկարություն, 10 կմ լայնություն, 40–45 մ խորություն, ջուրը մաքուր է և քաղցրահամ, ձկնառատ է: Կլիման այստեղ փոփոխական է, հաճախ քամիներ են փչում: Մեռյալ ծովի երկարությունը մոտավորապես 80 կմ է, լայնությունը՝ 15 կմ: Ծովը Մեռյալ է կոչվում, քանի որ նրա մեջ կյանքի գոյության որևէ նշան չկա: Ջուրը նրանից դուրս չի հոսում, ծով թափվող ջուրն անընդհատ գոլորշիանում է, որի հետևանքով բարձրանում է հանքային աղերի խտությունը: Աղի գոլորշիները վնասակար ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի և բուսական աշխարհի վրա, ուստի ծովի շրջակայքը ամայի և անբերրի է:

Պաղեստինի կլիման մերձարևադարձային է՝ չոր ամառներ և անձրևոտ ձմեռներ: Տեղումները քիչ են, ջուրը անձրևների ժամանակ հավաքվում է: Ցորենի ու գարու, ինչպես նաև լոբու, կորեկի և ոսպի բերքը բավարար էր երկրի բնակչության կարիքների համար: Արտահանվող հիմնական ապրանքներն էին ձիթապտղի յուղը, խաղողը և թուզը: Զարգացած էր նաև անասնաբուծությունը: Հին Կտակարանի գրքերում հաճախ հիշատակվում են խոշոր եղջերավոր անասուններ, ավանակներ, իսկ Սողոմոնի ժամանակներից սահմանափակ քանակությամբ՝ ձիեր, ինչպես նաև մանր եղջերավոր անասուններ՝ ոչխարներ, այծեր: Հրեաստանի լեռները ծածկված էին կաղնու անտառներով: Լիբանանը հայտնի էր իր մայրիներով: Աստվածաշնչում հիշատակվում են վայրի կենդանիներ՝ առյուծներ, հովազներ, աղվեսներ, շնագայլեր, վայրի ավանակներ:

Երուսաղեմ

Հրեաստանը գտնվում էր Հորդանանի արևմտյան ափին: Այստեղ կառուցվել է Երուսաղեմ քաղաքը, որը Դավթի ժամանակներից համարվում էր ողջ երկրի մայրաքաղաքը, ապա բաժանումից հետո՝ միայն նրա հարավային մասի, իսկ բաբելոնյան գերությունից հետո՝ Հրեաստանի: Երուսաղեմը նաև պաշտամունքային կենտրոն էր. Սողոմոնը Մորիա բլրի վրա կանգնեցրեց հայտնի տաճարը: Բեթղեհեմը՝ Դավիթ թագավորի և Հիսուսի ծննդավայրը, նույնպես գտնվում է Հրեաստանում: Հորդանանից դեպի արևմուտք Սամարիան է, որը երկրի բաժանումից հետո դարձավ հյուսիսային մասի կենտրոնը: Նրա գլխավոր քաղաքներն էին Սյուքեմը, Սամարիան, Տիրցան և Սելովը, որտեղ գտնվում էր հին պաշտամունքի սրբավայրը: Սամարիայի հյուսիսում տարածվում է Գալիլեան, որը հիմնականում հիշատակվում է Նոր Կտակարանում: Այստեղ էին գտնվում Նազարեթը, Կափառնայումը, Բեթսաիդան, Նաիմը և այլ քաղաքներ: Գալիլեայում պահպանվել են Հին Կտակարանից հայտնի քաղաքներ՝ Մեգիդո և Էն-Դոր: ➥ *էջ 7, 8*

Հովհաննես Թումանյանի ընտանիքը՝ անանց արժեքի մանրակերտ

➥ *էջ 5*

Այս բազմանդամ ընտանիքում կրթական միջավայրը ձևավորված էր ակամա, քանի որ Թումանյանի ընտանիքի հյուրերն էին ժամանակի հայտնի մտավորականները, գրողներն ու մշակույթի գործիչները. «....Եվ ամենափոքրիկը Հովհաննեսի զավակներից՝ Սեդան (ամենափոքրը՝ Թամարը, այդ ժամանակ ծնված չէր), անգամ ազդվում էր ոչ միայն իր քնքշասիրտ և սիրառատ հայրիկից, այլև գրական այն մեծերից, որոնք նստում էին նրա հետ միասին մի սեղանի: Ամենքն ապրում էին գրականության շահերով ու հարցերով, ամենքը ներդաշնակորեն միաձուլվում էին մի գրական ընտանիքի ամբողջության մեջ»:

Ընդունված էր տան պատերին իմաստուն մտքեր և մակագրություններ փակցնելը: Օրինակ՝ սեղանատանը փակցված էին այս մակագրությունները. «Իմաստությունը և մաքրությունը գեղեցկության հիմք են: Քո սրտի մեջ է փայլում քո բախտի աստղը» (Շիլլեր), «Մեր բախտը մեր ներսն է, դժբախտությունը՝ դուրսը» (Բյուֆոն), «Քո մտքերը, քո խոսքերը և քո գործերն էն կենդանի քարերն են, որոնցից շինած է քո հոգին»: Մակագրությունները ժամանակի ընթացքում փոխվում ու թարմացվում էին, և սա ևս բարեկրթության միջավայր էր ստեղծում՝ ուղերձներ հղելով ոչ միայն տան անդամներին, այլ նաև եկող- գնացողներին:

Ուշադրության և գնահատանքի արժանի են նաև Թումանյանի ընտանիքի ստեղծած խաղերը և ընտանիքում խաղեր կազմակերպելու մշակույթը: Ցայսօր պահպանվել և սերնդեսերունդ փոխանցվում են Թումանյանի ընտանիքի ստեղծած խաղերը, որոնք իրենց բնույթով հայրենաճանաչողական են: Ընտանիքում ընդունված էր միասին խաղալը, խաղերն ստեղծվում էին զավակների օգնությամբ: Միասին ընթրել, միասին խաղալ, միասին զբոսնել. սա խմբային արժեքների, խմբային մշակույթի, խմբային պատասխանատվության ու մտածողության ձևավորման հրաշալի միջավայր էր ստեղծում: Եվ եթե դիտարկելու լինենք ժամանակակից մանկավարժության ոճերի համատեքստում, ապա դաստիարակության գործընթացն այս մեծ ընտանիքում ժողովրդավարական բնորոշ նկարագիր ուներ, բռնության կամ պարտադրանքի որևէ դրսևորում չկար: Օրինակ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է կերակրվեր ըստ իր ցանկության: Որդիներից Արեգը միս չէր ուտում՝ կենդանիներին մորթելը համարելով մահացու մեղք, նրա համար առանձին ճաշ էին պատրաստում:

Ընտանիքի ներդաշնակ միջավայրի, ջերմ և հոգածու մթնոլորտի ձևավորման գործում նշանակալի էր Օլգա Թումանյանի դերը: Սիրո և փոխըմբռնման մթնոլորտում ծնվեցին ու դաստիարակվեցին նրանց տասը զավակները: Օլգա մայրիկն առանձնահատուկ սիրով ու նախանձախնդրությամբ էր պատրաստվում զավակների տարեդարձին (ընտանեկան արխիվում պահպանվել է նրանց ծննդյան օրերի տվյալներով Օլգայի կողմից կազմված թերթիկը): Նրա և ամուսնու միջև ստեղծված հոգևոր ներդաշնակ կապն անխախտ մնաց հանդիպման ու ծանոթության օրից մինչև Թումանյանի մահը: Ներդաշնակ և օրինակելի ամուսնական զույգի պերճախոս վկայություն է նրանց նամակագրությունը: Անսահման հավատարմություն, հոգևոր եզակի կապ է արտացոլված այդ նամակագրության մեջ: Նամակներից մեկում Թումանյանը կնոջը խոստովանում է, որ աշխարհում չկա որևէ մեկը, որ փոխարինի նրան: Մեկ այլ նամակում էլ հայտնում է, որ իրեն հաճելի է նրան գրելը, և շատ կվշտանա, եթե պատասխանն ուշանա: Վերջում միշտ խոսքն ավարտում էր այս կերպ. «Քեզ կարոտող Հովհաննես»:

Նույն սիրով ու ջերմությամբ էլ Հովհաննես Թումանյանին պատասխանում էր Օլգան: Նրա հոգում միշտ վստահություն կար ամուսնու սիրո և հավատարմության նկատմամբ, անգամ այն պարագայում, երբ նա հաճախ լինում էր ժողովների, հանդիպումների կամ մեկնում էր հանգստի: Նա ամուսնու համախոհն ու գաղափարակիցն էր, բոլորանվեր հոգեկիցը: Հենց այս փոխադարձ ջերմության ու փոխըմբռնման մթնոլորտում է ձևավորվել հարմարավետության ու ջերմության այն համախումբ զգացումը, որ իշխում էր Թումանյանների ընտանիքում: Օլգան ամիսներով հոգ էր տանում իր տանը հյուրընկալած Ղ. Աղայանի ընտանիքի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Կ. Գալֆայանի և այլոց համար: Այդ մասին նա իր նամակներից մեկում գրում է ամուսնուն. «Ինձ շատ է ծիծաղեցնում, որ Շանթը մինչև քո գալը մնալու է, երևի ինձ պահելու կամ հսկելու են բերել»: Թումանյանի ընկեր-բարեկամները զարմանում էին Օլգայի մշտազվարթ հյուրընկալությունից և համբերությունից. ժամանակակիցները հուշերում նրան կատակով անվանում էին «նահատակ», իսկ Թումանյանին՝ «ընտանեկան աղետ»:

Տասը զավակների կրթվելու, աշխատելու, ազգային-հանրային կյանքին նվիրվելու, արժեքներ ստեղծելու իրողությունը ևս հավաստիք է այս ընտանիքում կրթության արժևորման ու խոր իմաստավորման: Այս ընտանիքի պատմությունը պատկանում է յուրաքանչյուրիս, որովհետև նրանցից յուրաքանչյուրը դատապարտված էր գտնվել բարիկադների վրա: Զավակներն էլ հոր պես ժողովրդի ճակատագրով և մարդկության ցավով տառապող անհանգիստ ու մարդասեր կերպարներ էին: Նվարդ Թումանյանը հոր հետ 1915 թ. էջմիածնում խնամում էր արևմտահայ որբերին, Արտավազդ Թումանյանը՝ Վանի վերջին լիազոր պարետը, զոհվեց արևմտահայ գաղթականներին փրկելու, նրանց անվտանգ տեղահանությունը ապահովելու ընթացքում (1918): Անհատի պաշտամունքի տարիներին Համլիկը (1937) և Արեգը (1938) գնդակահարվեցին, իսկ Մուշեղը մահացավ սրտի կաթվածից (1938):

Ասում են՝ Օլգա մայրիկը չափազանց շատ էր գործում: Նա ժամերով ճաղերով գործվածքներ էր անում: Դուստրերը հաճախ ստիպված էին լինում քանդել գործվածքները և նրա մոտ նոր թելերի կծիկներ դնել: Հավանաբար նա գործում էր կորստի վիշտը՝ լուռ, սրտաբեկ և վիատ, երբևէ չփաթաթելով որևէ մեկին:

Վաղաժամ կորցնելով ամուսնուն, չորս որդիներին, դստերը՝ Անուշին, և երկու հասուն թոռներին, հաղթահարելով հոգեկան ծանր տառապանքները՝ Օլգան չչարացավ, ողբերգական կորուստներից հետո անգամ համախմբեց ընտանիքին՝ պահպանելով օջախի ջերմությունը, միասնականության ոգին: Ավելին. նա կարողացավ խնամքով պահել ու պահպանել, ապա Թումանյան թանգարանին հանձնել այն ամենը, ինչ կապված էր Թումանյանի հետ՝ արխիվը, աշխատասենյակը, գրադարանը, և հետագայում պայմաններ ստեղծեց դրանց պահպանման համար՝ Երևանում բանաստեղծի թանգարանը հիմնադրելիս: Հաստատակամությունը, զսպվածությունը, հավասարակշռվածությունը, քրիստոնեական խոհեմությունը, հոգատարությունն ու բարեկրթությունն ամբողջացնում են Օլգայի՝ որպես հայ ընտանիքի մոր անզուգական, եզակի և դասական կերպարը:

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ,
հ. գ. թ., դոցենտ

Եկեղեցի-պետություն հարաբերությունները 4-րդ դարում: Ներսես Մեծ և Պապ թագավոր

➥ էջ 2, 4

Երկրորդ կարևոր քայլը վանքեր և կրթական կենտրոններ հիմնելն էր: Ներսես Մեծի կաթողիկոսության ժամանակաշրջանը նշանավորվեց հայոց մեջ վանական կյանքի աշխուժացմամբ: Քրիստոնեության մեջ մշտապես մեծ դեր է ունեցել ճգնակեցությունը, որի դրսևորումներից են կուսակրոնությունը և վանական կյանքը կամ անապատականությունը: Վերջինս զարգացում ապրեց 4-րդ դարում և մեծ ազդեցություն թողեց քրիստոնեական եկեղեցու և դրա պատմական զարգացման վրա: Մարդիկ, ուղղակիորեն հրաժարվելով աշխարհիկ կյանքից, միայնակ կամ խմբերով հեռանում էին անմարդաբնակ վայրեր և ճգնակենցաղ դառնում: Սկզբնական շրջանում այն մեծ տարածում գտավ Եգիպտոսում՝ աստիճանաբար ներթափանցելով նաև Մերձավոր Արևելք՝ Պաղեստին, Ասորիք, ապա նաև Փոքր Ասիա և Հայաստան: Եկեղեցու սուրբ հայրերի կողմից գրվեցին վանական համակեցության կանոններ, խրատներ և թղթեր, որոնք նպաստեցին անապատական կյանքի զարգացմանը: Հայաստանում վանական կյանքի վերաբերյալ հիշատակություններ առկա են դեռևս Ս. Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսության շրջանից: Ըստ եկեղեցական ավանդության՝ հենց Լուսավորչի կողմից հիմնվեցին առաջին անապատները: Արդեն Ներսես Մեծի շրջանում վանականությունը մեծ ծաղկում էր ապրում, ինչի համար անհրաժեշտություն էր առաջացել հիմնելու նոր կենտրոններ և ներդնելու նոր կանոններ՝ նմանողությամբ Կապադովկյան Կեսարիայի, որի շնորհիվ այն համակարգված հիմքերի վրա դրվեց: Ցավալիորեն այսօր սխալ մեկնաբանության և խեղաթյուրման է ենթարկվում այս երևույթը՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ վանական շարժումը համաքրիստոնեական իրողություն էր՝ անկախ այս կամ այն եկեղեցականից կամ առաջնորդից: Բացի այդ՝ նման հաստատությունների հիմնումը նպատակ ուներ կուսակրոն հոգևորականներին աշխարհիկ կյանքից առանձնացնելու: Ներսես Մեծը վանական հաստատությունների տեսուչներ նշանակեց Շաղիտային, Եպիփանին, Եփրեմին և Սլկունյանց ցեղից Գինդին:

Վանքերի կողքին՝ հայոց գրավոր լեզվի բացակայության պայմաններում, բացվեցին նաև հունարեն և ասորերեն դպրոցներ, որոնցում ուսում առած սաներից շատերը հետագայում դարձան գրերի ստեղծման և հայ դպրության կերտման ռահվիրաներ: Այսպիսով՝ Ներսես Մեծի բուռն կրթական գործունեությունը սերմեր ստեղծեց հայ մշակույթի և գիտության Ոսկեդարյան շրջանի համար:

Աշտիշատի ժողովի մյուս կարևոր որոշումներն ուղղված էին հայ ժողովրդի մեջ արմատացած հեթանոսական մի շարք բացասական սովորույթների դեմ: Դրանցով արգելվում էին հանգուցյալների վրա անվայելուչ լացուկոծը և ինքնախեղումների հոռի երևույթները: Բացի այդ՝ հատկապես իշխանական ընտանիքներում մեծ տարածում էր գտել մերձավոր ազգականների միջև ամուսնությունը:

Կարգավորվեցին նաև հասարակական հարաբերություններն իշխող և անազատ դասի միջև՝ հետևելով նորկտակարանյան այն պատգամին, որով պատվիրվում է գթությամբ վարվել ծառաների հետ և նրանց չնեղել չափից ավելի հարկերով, պարտադիր աշխատանքներով, իսկ ծառաներին՝ հնազանդ լինել իրենց տերերին. «Ծառանե՛ր, ամեն բանով հնազանդ եղեք ձեր երկրավոր տերերին, ոչ թե ցուցադրական ծառայությամբ, կեղծավորաբար, այլ անկեղծ սրտով՝ երկյուղ կրելով Տիրոջից: Ինչ էլ որ անեք, սրտա՛նց արեք, ինչպես կանեիք Տիրոջ համար և ոչ թե մարդկանց: Իմացե՛ք, որ Տիրոջից կստանաք ձեզ խոստացված հատուցումը, որովհետև Տիրոջը՝ Քրիստոսին եք ծառայում.... Տերե՛ր, ձեր ծառաների հետ վարվե՛ք ուղղամտությամբ և արդարությամբ: Իմացե՛ք, որ դուք էլ Տեր ունեք երկնքում» (Կող. 3:22—4:1):

Պատմահայրը Ներսեսի այս բարեկարգությունների նկարագրությունն ավարտում է հետևյալ խոսքով. «Այնուհետև մեր աշխարհի մարդիկ երևացին արդեն ոչ բարբարոսների պես այլանդակված, այլ քաղաքացիների նման համեստացած» (Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 258):

Ինչ վերաբերում է Արշակ Բ-ի գործունեությանը, ակնհայտ է, որ քաղաքական բարենպաստ պայմաններից օգտվելով՝ վերջինս սկսում է պայքարել թագավորական կենտրոնական իշխանության հզորացման համար: Ուշագրավ է հատկապես Արշակավան քաղաքի կառուցումը՝ իբրև հզոր միապետի հենարան, ինչը թշնամանք է առաջ բերում օտարամետ իշխանական տոհմերի շրջանում: Այս հակամարտությունը վերածվում է ներազգային եղբայրասպան պատերազմի: Հայրապետը, չկարողանալով կանգնեցնել անխուսափելի դարձած արյունահեղությունը, հեռանում է արքունիքից՝ չցանկանալով մասնակից դառնալ տիրող անարդարությանը, սակայն շարունակում է իրականացնել իր հոգևոր առաջնորդությունը: Այնուամենայնիվ, երկրում տիրող խառնակ վիճակն ստիպեց Ներսես Մեծին տեղի տալ Արշակ Բ-ի խնդրանքին և տարիներ անց վերադառնալ պետական գործերին:

Արշակ Բ-ի ընթացքը բացասական արդյունքներ ունեցավ՝ դառնալով իր և Փառանձեմ թագուհու եղերական վախճանի պատճառ, որով ճանապարհ հարթվեց հաջորդ գահակալի համար: Ներսես Մեծի և հայ ավագանու միջամտությամբ ու հռոմեական զորքերի աջակցությամբ թագաժառանգ Պապը բազմեց Հայոց գահին: 371 թ. Ձիրավի ճակատամարտում հայ-հռոմեական միացյալ զորքերը հաղթանակ տոնեցին Հայաստանը երկար ժամանակ ասպատակող պարսից բանակի նկատմամբ: Ինչպես պատմահայրն է հայտնում. «Երբ մեծն Ներսես այս բոլորը տեսավ, բարձրացավ Նպատ լեռան գլուխը և ձեռները դեպի երկինք բարձրացրեց և առանց իջեցնելու աղոթք էր անում նախամարգարե Մովսեսի նման, մինչև երկրորդ Ամաղեկը պարտություն կրեց» (Խորենացի, էջ 275):

Պապ թագավորն իր գահակալման սկզբնական շրջանում լավ հարաբերություններ ուներ Ներսեսի հետ: Սակայն հայ հոգևոր և քաղաքական առաջնորդների մտերմությունը երկար չտևեց: Հռոմեական աջակցությամբ գահին բազմած թագավորը, որը բավականին երիտասարդ էր, փորձում էր կայսերական ազդեցությունից դուրս գալ և վարել ինքնուրույն քաղաքականություն, ինչը չափազանց անբարենպաստ էր, հատկապես հռոմեական զորքերի ներկայության պայմաններում: Այս ամենը պատճառ դարձավ Պապի և Ներսեսի միջև առաջացած թշնամանքի համար, քանզի վերջինս՝ իբրև փորձառու գործիչ, հասկանում էր նման քաղաքականության վտանգավոր հետևանքները: Շուտով Ներսես Մեծը մահացավ, ինչն այս հակամարտության պայմաններում վերագրվեց Պապ թագավորին: Նման տեղեկություններ են մեզ փոխանցում թե՛ Բուզանդը, թե՛ Խորենացին: Սակայն Բուզանդի պատմության մեջ առկա նկարագրությունները որոշ մասնագետների թույլ են տվել Ներսես Մեծի մահվան պատճառ համարել ոչ թե Պապի կողմից հրամցված թույնը, այլ կաթողիկոսի անբուժելի հիվանդությունը:

Ներսես կաթողիկոսի մահվանից հետո Պապը, ազատվելով վերջինիս ճնշող հեղինակությունից, հակաեկեղեցական պայքար սկսեց՝ փակելով այն հաստատությունները, որոնք հիմնվել էին հայրապետի ջանքերով, Եկեղեցուն զրկելով հողային մեծ տիրույթներից, կրճատելով հոգևորականների թիվը և ազատելով ժողովրդին տասանորդի վճարումից. «Պապ թագավորը եկեղեցուց կտրեց այն հողը, որ Գրիգոր մեծ քահանայապետի ժամանակ տվել էր Տրդատ թագավորը.... որովհետև յոթը հողից հինգը կտրում էր հօգուտ արքունիքի և միայն երկու հող էր թողնում» (Բուզանդ, էջ 221): Պապի քաղաքականությունը դժգոհությունների առիթ է դառնում Հայաստանում գտնվող հռոմեական զորքերի հրամանատար Տերենտիոսի համար, որը կայսեր հետ ունեցած նամակագրության մեջ ներկայացնում է վերջինիս «պարսկասեր» ձգտումները: Կայսրը, չցանկանալով կորցնել Հայաստանի վրա ազդեցությունը, որոշում է դավադրության միջոցով Պապին հեռացնել քաղաքական ասպարեզից: Դավադրության իրականացման համար հռոմեական զորավարների կողմից կազմակերպվում է ճաշկերույթ, որին հրավիրվում է նաև Հայոց արքան և սպանվում:

Հայ ժողովրդի համար բախտորոշ շրջանում դավադրաբար սպանվեց Պապ թագավորը: Չնայած նրա հայրենասիրությանը, տաղանդավոր գործչի հեռանկարին և պետության անկախության վերականգմանն ուղղված ջանքերին՝ Պապը երիտասարդ էր և անփորձ: Հայրենասիրությունը մեր նշանավոր գործիչների կարևորագույն առաքինություններից է, սակայն այն չպիտի խանգարի առկա իրավիճակի ողջախոհ գնահատմանը: Չկարողանալով կողմնորոշվել քաղաքական բարդ պայմաններում և զոհ դառնալով հռոմեական նվաճողական քաղաքականությանը՝ Պապ թագավորն իր մահով երկիրը հանգեցրեց հետագա մասնատմանը, ապա թագավորական իշխանության կորստին:

Այսպիսով՝ 4-րդ դարի երկրորդ կեսին ստեղծված քաղաքական իրադրությունը և ներքին կյանքի բարդությունները ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորություն չընձեռեցին: Իսկ եկեղեցի-պետություն հարաբերություններում առաջացած բախումները կապված էին թե՛ անձնական հարաբերությունների, թե՛ թագավորների կողմից քրիստոնեական արժեքների անտեսման և ոտնահարման և թե՛ արտաքին քաղաքականության իրականացման գործում առկա տարաձայնությունների հետ: Դարերի հեռավորությունից, անշուշտ, սխալ կլինի միանշանակ եզրակացության գալ, սակայն մեզ հայտնի փաստերի շնորհիվ որոշակի գնահատականներ պարտավոր ենք հնչեցնել՝ առանց բացասական կերպարների ստեղծման: Մի կողմում փորձառու Հայրապետն է, որը, ինչպես վերևում տեսանք, անուրանալի գործ կատարեց հայրենիքի համար, իսկ մյուս կողմում՝ երիտասարդ արքան, որը հեռանկարային էր, տաղանդավոր, սակայն անփորձ:

Արարատ Ղազարյան
Տոնո սրկ. Ղազարյան

Գուստավ Գեչե. «Բիբլիական պատմություններ»

➥ էջ 6

Հորդանանի արևելյան ափին՝ Անդրհորդանում, գտնվում են Բեթանիա, Գարիզիմ, Գադարա քաղաքները:

Պաղեստինում բնակավայրերն սկիզբ են առնում մարդկության պատմության ամենավաղ ժամանակներից: Երուսաղեմի հարավ-արևելքում և Կարմելի հովտում գտնվող քարանձավներում հայտնաբերվել են գերեզմաններ, գործիքների մնացորդներ, օջախներ, որոնք վկայում են այն մասին, որ այդ վայրերում եղել են նախամարդկանց բնակավայրեր: Մ. թ. ա. 4-րդ հազարամյակում Պաղեստինի բնակիչները բնակություն են հաստատել գետերի ափերին և հովիտներում, կառուցել տներ և զբաղվել գյուղատնտեսությամբ: Երրորդ հազարամյակում դրությունը փոխվեց: Եգիպտոսն սկսեց առևտուր անել Սիրիայի և Պաղեստինի հետ՝ միաժամանակ սպառնալով նրանց ռազմական ներխուժմամբ: Բնակչությունը տեղափոխվեց ավելի բարձր վայրեր և սկսեց կառուցել բերդեր ու պաշտպանական պարիսպներ (պատնեշներ): Այս շինությունները հատկապես անհրաժեշտ են դարձել, երբ 3-րդ հազարամյակի կեսերին Պաղեստինի դեմ սկսել են արշավել սեմական ցեղերը: Նրանք



Սինա լեռը

տեղաբնիկներին մղեցին միջլեռնային շրջան և ստեղծեցին քաղաք-պետություններ: Աստվածաշնչում այդ ցեղերը կոչվում են քանանացիներ (քանանական):

Սկսած մ. թ. ա. 20-րդ դարից՝ Պաղեստինում, Սիրիայում և Միջագետքում հայտնվեցին նոր ամորական ցեղեր (ամորական դինաստիայի անդամներից մեկը Համմուրապին էր): Այդ ժամանակ Պաղեստինը գտնվում էր Եգիպտոսի տիրապետության տակ, թեև նրա քաղաքներն ունեին որոշակի ինքնակառավարում: Մ. թ. ա. 14-րդ դարի սկզբին Պաղեստին ներխուժեցին սեմական ցեղերը (հրեաներ, մովաբացիներ, ամմոնացիներ, եդոմացիներ), որոնք հայտնի են Աստվածաշնչից:

Մ. թ. ա. 13-րդ դարում Պաղեստինը գրավել են իսրայելացիները: Փղշտացիները, որ ծովի ժողովուրդներից են՝ ըստ երևույթին, Կրետեից ներգաղթած (պելասգներ), նույնպես փորձեցին գրավել այն: 14—13-րդ դարերում նրանք բնակություն են հաստատել Պաղեստինի ծովափին: Նրանց և իսրայելացիների միջև դարավոր պայքար էր ընթանում այս երկրին տիրապետելու համար, մինչև որ Դավիթ թագավորի օրոք փղշտացիները մղվեցին դեպի ծով և մեկուսացվեցին այդ տարածքում: Իր աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ Պաղեստինը գտնվել է Եգիպտոսի և Միջագետքի թագավորությունների շահերի հանգույցում: Նրանց միջև գերիշխանության համար մղված մշտական պայքարը հետք թողեց Պաղեստինի ողջ պատմության վրա, որը չէր կարող խուսափել նրանց կրոնական և մշակութային ազդեցությունից:

Հյուսիսային Աֆրիկայի ամենահին պետությունը, որը գտնվում էր Նեղոսի հովտում՝ Ասուանի ջրվեժից մինչև Միջերկրական ծովի ափերը, Եգիպտոսն էր: Նեղոսի հովտում են գտնվել մարդկանց առաջին բնակավայրերը, որոնք սկիզբ են առել քարե դարից: Մ. թ. ա. 6—5-րդ հազարամյակներում այստեղ սկսեցին զարգանալ երկրագործությունն ու անասնապահությունը: Եգիպտացիները, օգտագործելով գետերի վարարումները, ստեղծում էին ոռոգման համակարգեր, որոնք հնարավորություն էին տալիս արդյունավետ օգտագործել Նեղոսի բերրի հողերը: Ոռոգման ջրանցքների կառուցումն ու ապահովումը պահանջում էին զգալի ծախսեր և մեծաքանակ մարդկանց կենտրոնացված գործունեություն: Սա հանգեցրեց նոմերի ստեղծմանը, որոնք ղեկավարում էին հասարակական աշխատանքները և միաժամանակ իրականացնում քաղաքական իշխանությունը: ➥ էջ 8

Գուստավ Գեչե. «Բիբլիական պատմություններ»

↩ էջ 6, 7

Մ. թ. ա. 4-րդ հազարամյակում առաջացել են երկու եգիպտական պետություններ, որոնք մշտապես պատերազմել են միմյանց հետ՝ Ստորին (հյուսիսային) Եգիպտոս և Վերին (հարավային) Եգիպտոս: 3-րդ հազարամյակի սկզբին Մենես փարավոնը դրանք միավորեց մեկ պետության մեջ: Այդ պետության պատմությունը բաժանված է երեք ժամանակաշրջանի. հին թագավորության դարաշրջանում (մ. թ. ա. 2900–2400 թթ.) մայրաքաղաքը Մեմֆիսն էր, կառուցվել են առաջին հսկայական բուրգերը: Մ. թ. ա. 3-րդ հազարամյակի վերջին թագավորությունը տրոհվել է անկախ նոմերի: Միջին թագավորության ժամանակաշրջանում (մ. թ. ա. 2000–1700 թթ.) Թեբեն դարձավ Եգիպտոսի մայրաքաղաքը: Միջին թագավորության վերջում արևելքից եկան սեմական ցեղեր, որոնցից մեկը՝ հիքսոս ցեղը, Նեղոսի դելտայում կառուցեց նոր մայրաքաղաք՝ Ավարիսը (Տանիս): Ենթադրվում է, որ Եգիպտոսում հիքսոսների օրոք իսրայելական որոշ ցեղեր են հայտնվել և բնակություն հաստատել Նեղոսի դելտայում: Նոր թագավորությունը (մ. թ. ա. 1500–1000 թթ.) ստեղծվել է հիքսոսների դեմ հաջող արշավի արդյունքում, որն սկսվել է Թեբեից:

Մ. թ. ա 15-րդ դարում Եգիպտոսը, նվաճելով Սիրիան և Պաղեստինը, ընդլայնեց սահմանը մինչև Եփրատ: Այդ մասին են վկայում Թել-Էլ-Ամարնա նամակները, որոնց մի մասը գրվել է քանանական քաղաք-թագավորությունների տիրակալների կողմից և հասցեագրված է փարավոնին, տիրակալին, արև-աստծուն, ում առաջ անհրաժեշտ էր յոթ անգամ խոնարհվել: Իսրայելական ցեղերի գաղթը Եգիպտոսից սկսվում է այս ժամանակներից:

Ուշ թագավորության շրջանում (մ. թ. ա. 1000–525 թթ.) սկսվեց Եգիպտոսի իշխանության աստիճանական անկումը: Սողոմոնի մահից հետո՝ մ. թ. ա. 10-րդ դարի վերջին, եգիպտացիներին դեռևս հաջողվեց թալանել Երուսաղեմը, բայց արդեն մ. թ. ա. 8-րդ դարում Եգիպտոսի վրա սկսում է արշավել Ասորեստանը: Մ. թ. ա. 7-րդ դարում Եգիպտոսն ընկնում է Ասորեստանի իշխանության տակ: Մ. թ. ա. 660 թ. Եգիպտոսին հաջողվեց ազատվել ասորական լծից, սակայն երբ Նեոբաբելոնյան թագավորությունը հարձակվեց Ասորեստանի վրա, նրան օգնության շտապեց Եգիպտական փարավոն Նեչոն: Նրա ճանապարհն անցնում էր Պաղեստինով: Հրեաստանի թագավորը փորձեց կանգնեցնել Նեչոյի զորքերը, բայց Մեգիդոյում պարտվեց: Նեչոյի բանակը ջախջախվեց Նաբուգոդոնոսոր թագավորի կողմից: Նեչոյի հաջորդները փորձեցին օգնել Հրեաստանին Բաբելոնի դեմ պայքարում, սակայն նրանց փորձերը հաջողությամբ չպսակվեցին: Եգիպտոսն այնուհետև ընկավ պարսիկների ձեռքը (մ. թ. ա. 525 թ.): Մ. թ. ա. 322 թ. այն գրավել է Ալեքսանդր Մակեդոնացին, որի մահից հետո իշխանությունն անցել է Պտղոմեոսների ձեռքը:

Մ. թ. ա. 30 թ. երկիրը գրավել են հռոմեացիները: Եգիպտական պաշտամունքի գլխավոր աստվածները (Ամոն, Ռա, Աթոն) առանձնացան բնության ուժերը անձնավորող բազմաթիվ հին աստվածներից և քրմական միջավայրում երկար պայքարից հետո գլխավորեցին աստվածների պանթեոնը: Հաղթող է դուրս եկել Թեբեյի աստված

Նազարեթ

Ամոնը, որը միաձուլվել է հնագույն արևի աստված Ռա-ի հետ: Աթոնը հետին պլան մղվեց:

Նոր թագավորության օրոք փարավոն Ամենհոտեպ 4-րդը (1375–1358 թթ.) իրականացրել է բարեփոխում, որը պետք է հարված հասցներ Ամոնի քրմերի հեղինակությանը և վերջ դներ նրանց՝ փարավոնի արտոնությունների վրա ունեցած ազդեցությանը: Նա փառազրկեց Ամոն-Ռա աստծուն և հռչակեց միակ աստված Աթոնի պաշտամունքը: Ի պատիվ նոր աստվածության՝ Միջին Եգիպտոսում կառուցվել է Ախեթաթեն քաղաքը, որը դարձել է փարավոնի մայրաքաղաքը. վերջինս իրեն անվանել էր Ախենաթեն: Սակայն Ախենաթենի մահից հետո Աթոնի պաշտամունքը դադարեցվեց, և Ամոն-Ռան կրկին դարձավ գլխավոր աստվածությունը:

Որոշ կրոնագետներ կարծում են, որ Ամենհոտեպ Չորրորդի միաստվածությունն ազդել է Մովսեսի վրա, որը, հավանաբար, այդ ժամանակ եգիպտոսում էր: Ավելին. այդ ազդեցությունն այնքան մեծ էր, որ ստիպեց Մովսեսին ձևակերպել հրեական միաստվածությունը և հռչակել այն օրենքի տեսքով: Այդ ժամանակ Միջագետքում (Տիգրիսի և Եփրատի միջև ընկած տարածքը) առաջացան Եգիպտոսին նման առաջին պետությունները: Այս տարածքի ամենահին բնակիչները եղել են շումերները, որոնք մ. թ. ա. 4–3-րդ հազարամյակներում տարածաշրջանի հարավային հատվածում ստեղծեցին քաղաք-պետություններ (Էրիդու, Ուր, Ուրուկ, Լագաշ, Նիպպուր): Նրանց մշակույթը փոխառել են այստեղ եկած սեմական ցեղերը:

Մ. թ. ա 3-րդ հազարամյակի սկզբին Սարգոն թագավորը Միջագետքում ստեղծեց միասնական պետություն՝ միավորելով սեմական ծագում ունեցող աքքադական ցեղերին: Բայց նույն 3-րդ հազարամյակի վերջերին Միջագետք ներխուժեցին նոր սեմական ամորական ցեղեր, որոնք ստեղծեցին իրենց պետությունը՝ Բաբելոն մայրաքաղաքով: Ավելի ուշ՝ մ. թ. ա. 18-րդ դարի սկզբին, Համմուրաբի թագավորն ստեղծեց Հին Բաբելոնյան պետությունը: Հայտնի օրենքները կապված են Համմուրաբիի անվան հետ: Համմուրաբիի դինաստիան տապալվեց մ. թ. ա. 1530 թ. խեթական ցեղերի կողմից: 2-րդ հազարամյակի կեսերին հուրիները հայտնվեցին Միջագետքում և հիմնեցին Միտանի պետությունը, սակայն արդեն 15-րդ դարում այդ տարածքն անցավ Եգիպտոսի տիրապետության տակ:

Մ. թ. ա 2-րդ հազարամյակի սկզբին պետություն են հիմնել երկրի հյուսիսում ապրող ասորիները: 11-րդ դարից սկսած՝ Ասորեստանի ազդեցությունն ուժեղանում է, 8-րդ դարում Ասորեստանը տիրում է ողջ Միջագետքին և սկսում նվաճողական արշավանքներ կատարել դեպի Միջերկրական ծով և Եգիպտոս: Այսպիսով՝ Ասորեստանը գրավում է Պաղեստինի հյուսիսային հատվածը՝ Իսրայելը, և գերեվարում բնակչության մեծ մասին:

Մ. թ. ա 7-րդ դարում՝ Աշուրբանիպալի օրոք, Ասորեստանը գտնվում էր իր փառքի գագաթնակետին: Հզոր պետության մայրաքաղաք Նինվեում կառուցվեց հսկայական գրադարան, որն ասորական մշակույթի գանձարանն էր, սեպագիր արձանագրությունների շտեմարան: Նրա ավերակներում հնագետները գտան միջագետքյան առասպելի մասին գրառումներ, որոնք սկսվում էին «Էնումա էլիշ» («Երբ վերևում») բառերով, ինչպես նաև «Գիլգամեշ» էպոսի հատվածներ, որոնք պարունակում էին համաշխարհային ջրհեղեղի նկարագրություն: Աշուրբանիպալի գահակալության ավարտին Ասորեստանը թուլացավ, իսկ նրա մահից հետո փլուզվեց մարերի, պարսիկների և բաբելոնացիների հարվածներից, որոնք մ. թ. ա. 612 թ. գրավեցին և այրեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն:

Մ. թ. ա. 7-րդ դարի վերջին Տիգրիս գետի արևմտյան ափին առաջացավ Նեոբաբելոնյան թագավորությունը: Նրա թագավորներից ամենահայտնին Նաբուգոդոնոսոր Երկրորդն էր: Նա իր առջև նպատակ դրեց ընդարձակել պետության սահմանները և փորձեց գրավել Եգիպտոսը: Քանի որ Եգիպտոս տանող ճանապարհն անցնում էր Պաղեստինով, նա ստիպված էր հանդիպել Հրեաստանի դիմադրությանը: Նաբուգոդոնոսորի գլխավորած զորքը երեք անգամ արշավել է Հրեաստան, բայց միայն մ. թ. ա. 587 թ. նրան հաջողվեց գրավել Երուսաղեմը, իսկ երկրի բնակչության մեծ մասը տարվեց Բաբելոն (բաբելոնյան գերություն):

Մ. թ. ա. 538 (539) թ. Պարսից Կյուրոս թագավորը նվաճեց Նեոբաբելոնյան թագավորությունը, հրեաներին թույլ տրվեց վերադառնալ իրենց հայրենիք և կառուցել նոր տաճար: Պարսկական թագավորությունն ստեղծվել է մ. թ. ա. մոտ 559 թ.՝ արագորեն տարածելով իր ազդեցությունը հարևան պետությունների վրա: Պարսկական աքեմենյան դինաստիան գրավեց Բաբելոնը, Լիբիան, Եգիպտոսը, բայց մ. թ. ա. 331 թ. Պարսկաստանը գրավեց Ալեքսանդր Մակեդոնացին, որի իշխանության տակ անցան նաև Եգիպտոսը, Միջագետքը, փոքրասիական երկրները, Պաղեստինը: Նրա մահից հետո (մ. թ. ա. 323 թ.) հետնորդները երկար տարիներ պայքարել են այդ տարածքներին տիրապետելու համար, ինչի արդյունքում մանր պետությունների հետ միասին ստեղծվել են երեք թագավորություններ. Եգիպտոսը և Առաջավոր Ասիայի երկրները (այդ թվում՝ Պաղեստինը) հայտնվեցին Պտղոմեոսների ձեռքում, Միջագետքը՝ Սելևկյանների, իսկ Մակեդոնիան՝ Անտիգոնների:

Մ. թ. ա. 197 թ. Սիրիայի Սելևկյանները Պտղոմեոսներից խլեցին Պաղեստինը և այն հայտարարեցին իրենց պետության մաս: Հենց նրանց դեմ Մակաբեացիները հաջողությամբ ապստամբեցին մ. թ. ա. 167 թ.:

Պաղեստինի պատմության մեջ նշանակալից դեր խաղաց Փյունիկիան: 3-րդ հազարամյակի վերջերին նրա տարածքում առաջացել են փոքր քաղաք-պետություններ՝ Բիբլոսը, Սիդոնը, Ուգարիթը: Իսրայելացիները փյունիկեցիներից արհեստագործական իրեր էին գնում, իսկ Սողոմոնի տաճարի կառուցմանը մասնակցում էին փյունիկացի արհեստավորներ:

1929–1933 թթ. նախկին Ուգարիթի (այժմ՝ Ռաս Շամրա բլուր) տարածքում պեղումներ են իրականացվել, որոնք ի հայտ են բերել դարերի խորք հեռացող՝ մինչև 3-րդ հազարամյակ ձգվող մշակութային շերտեր: Ամենանշանակալի գտածոները թվագրվում են մ. թ. ա 15–12-րդ դարերին: Դրանց մեջ առանձնանում են 20 կավե սեպագիր գրություն ուգարիթերենով, որոնք պարունակում են առասպելներ, հերոսների մասին պոեմներ և այլ գրառումներ:

Այս գրություններն ուսումնասիրելիս պարզվեց, որ ուգարիտացիների կենտրոնական աստվածները էլ և Աշերան ամուսնական զույգն էին, այս զույգի յոթանասուն հետնորդներից աչքի են ընկնում մահվան և անդրաշխարհի աստված Մոտը և երկրի տիրակալ Բահաղը: Էլ աստվածությանը հանդիպում ենք Աստվածաշնչում, և նրա անունը գործածվում է նաև հոգնակի ձևով՝ Էլոհիմ: Շատերը կարծում են, որ Էլոհիմ անվան տակ թաքնված է հին սեմական աստվածություն: Կա ենթադրություն, որ Յահվե Աստծո անունը նույնպես փոխառված է ուգարիթերենից: Եթե դա ճիշտ է, ապա Ուգարիթում երկրպագել են նաև Յահվե Աստծուն:

Աստվածաշունչը հղումներ է պարունակում այն մասին, թե ինչպես հին ժամանակներում Յահվեն ստիպված էր դժվարին մարտեր մղել հակառակորդների, հատկապես Լևիաթանի և Ռեքաբի հետ, որպեսզի ամրապնդեր իր իշխանությունը և դառնար տիեզերքի տիրակալը: Ուգարիթյան սեպագիր արձանագրությունները ցույց են տալիս, որ այս պատմություններին նախորդել են հնագույն առասպելներ, որոնք հավերժացնում էին աստվածների պայքարը: Այսպիսով՝ ուգարիթյան Լևիաթանը ծովային հրեշ է, որի դեմ սովորաբար մարտնչում է Բահաղը, որը, ի դեպ, նույնպես ընդգրկված էր քանանական աստվածների պանթեոնում: Հրեա քահանայապետերը դեմ էին նրա պաշտամունքին: Ընդհանրապես, ուգարիթական տեքստերում կան բազմաթիվ դրվագներ, որոնք այս կամ այն կերպ կապված են Աստվածաշնչի և հրեական կրոնի հետ: Ըստ երևույթին, ուգարիթական և հրեական կրոնների միջև սերտ կապ կար:

Այս երկու կրոնների նմանությունը բացատրվում է նրանց համար ընդհանուր հին սեմական առասպելական ավանդույթներով: Տարբերությունները բացատրվում են նրանով, որ սեմական ցեղերը անջատվել են միմյանցից և հավատալիքների ձևավորման տարբեր ուղիներով գնացել: Երբ մ. թ. ա 13-րդ դարում իսրայելական ցեղերը եկան Քանան, նրանք իրենց հետ բերեցին բազմաթիվ պաշտամունքներ, որոնք զարգացել էին իրենց քոչվորական կյանքի ընթացքում:

Ռուսերենից թարգմանությունը՝
Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ,
ԵՊՀ ադրբեջանագիտության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող

Աստուածաշունչ՝ գիրք գրոց



Մերձաւորիդ նկատմամբ որ մի՛ պահիր նրա բոլոր մեղանչումներ պատճառով եւ թշնամական արարքներ մի՛ գործիր նրա դէմ: Ամբարտաւանութիւնը ատելի է թէ՛ Տիրոջ եւ թէ՛ մարդկանց համար. դա երկուսի համար էլ անիրաւութիւն է: Թագաւորութիւնն անցնում է մի ազգից միւսին անիրաւութեան, թշնամանքի եւ ընչաքաղցութեան պատճառով:

Սիրաք, 10:6–8

ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

ՕԳՈՍՏՈՍ

† Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի – օգոստոս 17

† ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ - օգոստոս 18

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.08.2024 թ.
Տպաքանակը՝ 1265